№ 172 ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 8

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 8 № 172

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

(36-րդ ՏԱՐԻ)

ԱԳԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ

Ամսական ՄԷԿ րուբլի

Ամերիկա տարեկան .	6 դօլլար
Եւրոպա » . .	30 ֆրանկ
Պարսկաստան » .	10 րուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել	40 կոպ.

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԱՍԱՒՈՐՈՒՄԸ

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Օգոստոսի 22-ին—Ռուսերէն լեզու պատրաստական դասար.։ Թւաբանութիւն I, II և III դաս.։ Մասնագիտական առարկաներ VII դաս. (հաշւապահութիւն, առևտրական թւաբանութիւն, առևտրական աշխարհագրութիւն, առևտրի պատմութիւն, օրէնսգիտութիւն, քիմիա և վաճառագիտութիւն)։

Օգոստոսի 23-ին—Թւաբանութիւն պատրաստական դաս.։ Ռուսերէն լեզու I, II, III, IV, V, VI և VII դաս.։

Օգոստոսի 25 ին—Մաթեմատիկա IV, V, VI և VII դաս.։ Ֆրանսերէն եւ գերմաներէն լեզու I, II և III դաս.։

Օգոստոսի 26-ին—Գերմաներէն լեզու VI և VII դաս.։ Բնական գիտութիւն և աշխարհագրութիւն I-ից—IV դաս.։ Ֆիզիկա V և VI դաս. և տիեզերագրութիւն (космографія) VII դաս.։

Օգոստոսի 27 ին—Ֆրանսերէն լեզու IV-ից—VII դաս.։ Կրօն և տեղակ. լեզու բոլոր դասարաններում։ Պատմութիւն III, IV, V և VI դաս.։

Օգոստոսի 28-ին—Ընդունելութեան քննութիւններ ստորին դասարաններում։

Պատրաստական դասարանի ստորին բաժանմունքում ընդունելութիւնը շարունակվում է։ Վերաքննութիւնների և քննութիւնների սկիզբն է առաւօտեան ժամը $8^{1}/_{2}$-ին։

Մաղթանքը և պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 1-ին, առաւօտեան ժամը $8^{1}/_{2}$-ին։

Վերատեսուչ՝ Գ. Գ ԵԽՏՄԱՆ

(Կ. Հ. ու.) (առ.) 5—2

ՎՏԱՆԳՎԱԾ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

II

Մեր երկրում կան մի շարք գիւղեր, որտեղ բնակիչների թիւը ոչ միայն չէ աճում, այլ և նուազում է։

Այսօր մենք մեր ընթերցողների ուշադրութիւնն ենք հրաւիրում մի հայ գիւղի վրա, որ գտնվում է սարսափելի հակաառողջական վիճակի մէջ և իւրաքանչիւր տարի տալիս է մահացութեան չափազանց խոշոր թւեր։

Դա Ռուշանաշէն գիւղն է Դէօկչայի գաւառում։

Այդ գիւղում, որ բաղկացած է 90 տնից և 550 շնչից, իւրաքանչիւր տարի մեռնում է, տեղական քահանայ Պարոյր Տէր-Ստեփանեանի ասելով, մօտ հարիւր հոգի, մինչդեռ ծննդաբերութիւնը տարէ-տարի պակասում է։ Օրինակ, անցեալ տարի եղել է միայն 37 առողջ ծնունդ։ Յղի կանայք, մեծ մասամբ ենթակայ լինելով հիւանդութիւնների, վիժում են մանուկներին նրանց զարգացման զանազան շրջաններում։

Գարնան ամիսներում ազգաբնակութիւնը դեռ փոքր ի շատէ առողջ դրութեան մէջ է լինում։

Բայց օգոստոսի կէսից յետոյ սկըսում են երևալ տկարութեան նշաններ, որոնք քանի գնում են՝ սաստկանում են և վերջանում մահով։

Գլխաւոր հիւանդութիւնը ջերմ ու տենդն է։

Պէտք է նկատել, որ գիւղը գտընվում է ճահիճների մէջ, որոնք այնքան մօտ են գիւղին, որ անձրևաշատ տարիներն ջուրը բարձրանում է մինչև գիւղական գոմերը և լցվում նրանց մէջ։

Տները սարսափելի խոնաւ են և մարդիկ տառապում են ոսկրացաւից։

Գիւղը ամառվայ ամիսներում խեղդվում է մոծակների մառախուղից։

Թէ մեծ և թէ փոքր անխտիր ենթակայ են հիւանդութեան։ Ամբողջ գիւղում յայտնի են միայն երկու ծերունի մարդ եօթանասուն տարուց անց։ Նոյնպէս չը կան և մանուկներ փոքր ի շատէ աչքի ընկնող քանակով։ Գիւղում մանուկների ձայն չէք լսում։

Հոկտեմբերից մինչև փետրվար համարեա ամեն օր գիւղը ննջեցեալներ ունի և երբեմն մինչև 3—4 հոգի։ Ժողովուրդը. անիծում է իր օրը և կեանքը։

Բայց կարելի է ազատել գիւղական ժողովրդին մահի ճիրաններից և կազդուրել նրա առողջութիւնը։

Եւ այդ մասին պէտք է լուրջ հոգատարութիւն ունենալ։

Պէտք է գիւղը փոխադրել աւելի առողջարար տեղ։ Եւ այդ հնարաւոր է աջողեցնել հէնց նոյն գիւղի հողի սահմաններում։

Օրինակ, այդ տեսակ մի յարմար տեղ կարելի է համարել Այաղաջ կոչված բարձրադիր տեղը, որի մօտ կայ մաքուր աղբիւրի ջուր։

Այաղաջը հեռու է ներկայ գիւղատեղից մօտ $1^{1}/_{2}$ վերստ։

Եթէ գիւղացիները իրանց նոր տեղում ստիպված լինեն ջուրը հեռուից բերել, այնուամենայնիւ պէտք է չը քաշվեն այդ հանգամանքից և օր առաջ պէտք է փախչեն ներկայ մահաբեր գիւղատեղից։

Նոյն վիճակի մէջ է և Փորր-Գանձակ կոչված գիւղը, որ գտնվում է Ռուշանաշէն գիւղին կից և որտեղ մահացութիւնը աւելի ևս մեծ է, որովհետև խմելու ջուրը բոլորովին անբաւարար է և մարդիկ ապրում են աւելի և վատ բնակարաններում։

Ցանկալի է, որ լուրջ ուշադրութիւն դարձվի Ռուշանաշէն գիւղի վիճակի վրա և հերթական դարձվի նրա փոխադրութեան հարցը դէպի աւելի առողջարար տեղ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Рѣчь» լրագիրը հաղորդում է հետևեալը.

Մեր բեռլինեան թղթակիցը հեռագրում է մեզ տեղական «Köln. Zeitung»-ի մէջ զետեղված—որը արտաքին քաղաքականութեան հարցերում համարվում է պաշտօնական—Կ. Պոլսից ստացված հեռագրի մասին, որտեղ ասված է.

«Երիտասարդ-թիւրքերի կոմիտէտը յայտնեց, որ երբ Ռուսաստանն ու Ֆրանսիան սպառնացել են միջամտել, եթէ թիւրքական կառավարութիւնը չը ճնշէ երիտասարդ-թիւրքերի շարժումը»։

Կոմիտէտը իր կողմից յայտնում է, որ այդ տեսակ միջամտութեան մասին մտածելն անգամ հրէշային է, որովհետև թիւրքական ժողովուրդը կռւի է մղում առաջադիմութեան, ազատութեան և մարդասիրութեան գաղափարի համար, և Եւրոպայի ազգերը չեն կարող դէմ լինել այդ շարժման։

Ինքը «Köln. Zeitung»-ը այդ յայտարարութիւնը անսպասելի է համարում, որովհետև որևէ միջամտութեան մասին ոչ մի բան մինչև այժմ յայտնի չէ եղել։

Մենք,—ասում է «Рѣчь»-ը,—ամենապատասխանատու աղբիւրից ստացանք կատեգորիկ յայտարարութիւն, որ ամենափոքր առիթ անգամ չէ եղել և չէր էլ կարող լինել այդպիսի լուրի համար, որովհետև Ռուսաստանը հաստատ է մնում իր արտաքին գործերի մինիստրի շրջաբերական-նօտայի մէջ արտայայտված տեսակէտին և որ ռուսաց դիպլոմատիայի կողմից ոչ մի այնպիսի քայլ չէ արված, որը հիմք տար միջամտութիւնը բացատրելու։

Այդ բոլորից յետոյ հասկանալի է, որ այդ լուրերի տարածումը հետևում է բոլորովին ուրիշ տեսակ նպատակների, որոնք ոչ մի առնչութիւն չունեն թիւրքական ազատութեան հետ։

Այդ նպատակները, երևի, յայտնի էին նաև «Köln. Zeit.»-ին, որը հնարաւորութիւն ունի իր տեղեկութիւնները քաղելու գերմանական նախարարութիւններից։

—

Լօնդօն, 6 օգոստոսի

Օգոստոսի 4-ի երեկոյեան, Մէյկէլ հանքերում, Ույգանի մօտ, Լանկաշիրի կոմսութեան մէջ, պայթում առաջացաւ։ Հողի տակ մնացին 70 լեռնային բանւորներ։ Ազատելու յոյսերը թոյլ են։ Թունաւոր գազերի տարածման պատճառով, որոնք արգելք են լինում ազատարար մարմնի աշխատանքներին, առայժմ հանել են երեք դիակ։ («Հ. Գ.»)

—

Պեատիգօրսկ, 6 օգոստոսի

Ոստիկանապետ ֆօն-Օգլիօի կեանքի դէմ կատարած մահափորձողներին որոնելու ժամանակ քաղաքի ծայրում գտնվեց յեղափոխական կազմակերպութիւն։ Կան շատ ձերբակալվածներ, ի թիւս որոնց մի քանի կանայք։ Գրաւված է մի գաղտնի տպարան և մօտ 700 փամփուշտ։

(«Հ. Գ.»)

—

Ռոստով Դ/Վ, 6 օգոստոսի

Խոլերայի սկզբից մինչև օրս հիւանդացել են քաղաքապետութեան մէջ 204 մարդ, որոնցից մեռել են 84-ը։

(«Հ. Գ.»)

ԹՈՒՐՔԻԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԵՄՔԻՆ

—

Մակեդոնական կազմակերպութիւնը պաշտօնապէս հրաժարվեց Մակեդոնիայի համար ավտոնոմիա պահանջելու մտքից՝ այն պատճառով միայն, որ ստեղծվի շրջանային ինքնավարութիւն։

Ներքին կազմակերպութեան նախաձեռնութեամբ Մակեդոնիան ցանցապատվում է ակումբներով։ Պատրաստութիւններ են տեսնում ակումբների համագումար հրաւիրելու՝ ինքնավարութեան նախագիծը մշակելու համար։

(«Рѣчь»)

—

Պարիզից հեռագրում են «Бирж. Вѣд.» լրագրին.

Այստեղ ապրող երիտասարդ-թիւրքերը լուրջ նշանակութիւն չեն տալիս 4-րդ զօրաբանակի մէջ պատահած խռովութեանը։ Կարծում են, որ այդ լուրն առաջ է եկել մի քանի օֆիցերների ու զինւորների արարքներից, ինչպէս որ մօտ օրերս եղաւ Ադրիանուպոլսում։ Հաւանական է համարվում այն ևս, որ 4-րդ զօրաբանակի խռովութիւնը արդիւնք է Պոլսի երիտասարդ-թիւրքերի կոմիտէտի մէջ պատահած պառակտման, որտեղ մի մասը Նիազի-բէյի առաջնորդութեամբ պահանջում է սուլթանից անյապաղ արձակել պալատական գվարդիան, մինչդեռ միւսը հրաժարվել է այդ պահանջից։

Պարիզեան երիտասարդ-թիւրքերի կոմիտէտը տեղեկութիւն է ստացել, որ Կրետէ կղզու յոյների և երիտասարդ-թիւրքերի միջև տեղի է ունեցել ընդհարում շնորհիւ այն բանի, որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԵԳԻՊՏՈՍԻՑ

(Սեփ. թղթ.)

—

Կահիրէ, 1 օգոստոս (Ն. տ.)

Ամբողջ աշխարհը իր լարուած ուշադրութիւնը այժմ դէպի Թիւրքիա դարձուցած է, ուր սուլթան Աբդիւլ-Համիդ ապշեցուցիչ հապճեպով մը 1876 ին տուած և մօտ մէկ տարիէն ետ առած սահմանադրութիւնը կրկին կը վերահաստատէ իր երկրին մէջ։

Խանդավառութիւնը մեծ է ամենուրեք, թէ մահմեդականաց և թէ օսմանեան միւս հպատակներուն մէջ և անոնց, որոնք հոս կը գտնուին։ Պոլսէն հասած հեռագիրները իրարու ետեւէ հաղորդեցին մակեդոնական օսմանեան բանակին ընդվզումը, նախորդ վէզիրին անկումը, Քիւչիւկ Սայիդին «Նախարարապետ» անուանումը, սահմանադրութեան վերակենդանացումը, քաղաքական յանցաւորներուն ընդհանուր ներողութիւնը, լրտեսական դրութեան բարձումը, մամուլի կատարեալ ազատութիւնը, սուլթանի երդումը, Օրմանեանին հրաժարականը և այլն և այլն։

Ինչպէս կը տեսնէք, Արևելքը, այդ սև, կարմիր և մահահոտ Արևելքը, չէ դադրած և կը թուի թէ չպիտի դադրի այն դիւթական ու առասպելական երկիրը ըլլալէ, որուն սկիզբը և վերջը անակնկալներու, տարօրինակութիւններու, ծայրայեղութիւններու, անբնականութեանց ու հրաշքներու անծայր և անհատնում ու մանուածապատ մշուշին մէջ կը կորսուին։

Այսու ամենայնիւ իրողութիւն մը կը մնայ գէթ առայժմ՝ որ Թիւրքիա անցեալ յուլիս 24-էն ի վեր դադրած միահեծան բռնակալութիւն մը ըլլալէ, սահմանադրական երկիր մը ըլլալու կը պատրաստուի, և յառաջիկայ նոյեմբերին երկրին ամեն ծայրերէն հասնելիք և ժողովրդեան քուէներով ընտրուած օսմանեան երեսփոխանաց ժողովը պիտի վարէ երկրին գերագոյն ճակատագիրը։

Թիւրքիան ակնթարթի մը մէջ իր սև խաւարը պատռած, ազատութեան լուսաշող ճառագայթներու մէջ թաթառուն, գոգցես Բեթհովէնին երկնային օրհներգն է որ կը հնչեցնէ.

Փառք ի բարձունս Աստուծոյ
Եւ յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ
հաճութիւն.

Ձայն մը, առաջացած դարերէ ի վեր բըռնաւոր րէժիմի մը խեղդիչ լուծին տակ իր ստրկացուցած որդոց սրտերուն պոռթկումէն։ Եւ դեռ երէկ և երէկ չէ միւս օրն իրարու արիւնը ծծող, մոլեգնապէս թշնամի զանազան ազգութիւններու հատուածները, նորաշնորհ սահմանադրութեան մոգական գաւազանին ազդեցութեան տակ «սաաց և եղէյի»-ի գերբնական ներգործութեամբ մը կարծես, կը պոռան.

Տուր ինձ քո ձեռքը, եղբայր իմ մեծ,
Ընդ ասեղօք ինչ կայ սիրուն,
Քան զանցկալի եղբայր անուն։

Ու Թիւրքիան, այդ «հիւանդ մարդու» հիւանդ ու դատապարտեալ երկիրը, ազատութեան կենսատու շոգիէն եռուցեալ, կենդանացած, իր ինկած տեղէն պիտի կանգնի յաղթական, պիտի կանգնի և բարձրանայ մինչև քաղաքակրթութեան բարձրագոյն սահմանները, ուր Թէև իր տեղը ցուրտ, մութ, պարապ ու տղմուտ, սակայն կը մնայ։ Հոն պիտի երեւի փառայեղ ծածանցին, հոն Թիւրքը, քիւրդը, չէրքէզը, արաբը, հայը, յոյնը, սերբը, բուլղարը, ալբանացին և այլն և այլն, ձեռք ձեռքի, միասին, միաբան և միակամ սուրբ յառաջդիմութեան անվերջ շաւղին մէջ…

Ու… պիտի դադրին լացն ու կոծը. արիւնը և կրակը, աւերը և սովը. ու թող անդարձ հեռի երթան ցեղական խժատ ատելութիւնքը, նախանձը. եղբայրական խանդավառ գրկախառնութեան մը մէջ թող հալին քաղաքական, ազգայնական ճգճիմ կիրքերը, թող Եւրոպան, Ամերիկան Թողուն, մոռնան այլևս իրենց խաւարակուռ հաշիւները, ճիւաղ մտածումները, անօրէն ոտնձգութիւնները Թիւրքիոյ մասին։ Չի՞ ան, արթնցած այլևս, մանուկ մըն է՝ Թէև խայտաբղէտ՝ որ ծնած է գիտութեան լոյծին տակ խորշոմած և փտած ծերուկէն, որուն առաջ պիտի խոնարհին ամենքը։ Եւ այն երկրին մէջ, ուր բռնակալութիւն, արիւն և արցունք կար, խաղաղութիւն, հացի և կեանքի փոխարէն՝ հոն լոյս, եղբայրութիւն և ազատութիւն պիտի թագաւորեն Եըլդըզի փառաւոր բարձունքներէն…

Ահա այն գեղանկարը, գրաւիչ հեռանկարը, որ ներկայի վառ հմայքը կը ներշնչէ Թիւրքիոյ վարդագոյն ապագային համար ևս։

Ինչո՞ւ չէ… Եթէ ներկան այսպէս է։

Սկեպտիկ ըլլալ պիտի չուզէինք։ Դէպքեր կան և գործի ընթացքներ, որոնց նախատեսութիւնը որքան կարելի, սակայն անոնց կառավարութիւնը և սանձահարումը ամենէն զօրեղ ուժերէն և ազդակներէն իսկ կրնան խուսափիլ։ Բայց այն խանդավառութիւնը, որ կը տիրապետէ ամենուրեք, այս հեռանկարը, արդարև, շատ փայլուն, մեծ և արժէքական են, որքան հնարին չեն Թիւրքիոյ պէս երկրի մը և անոր ժողովուրդներուն համար, որպէսզի հնար ըլլայ մեզ աչքը խուփ ընդունիլ զանոնք։

Առանց խանդավառ մը ըլլալու, սակայն, կրնանք ուրախակցիլ Թիւրքիոյ վերածնութեան այս իրողութիւններուն և դէպքերուն, որոնք պէտք է խոստովանիլ իրենց նախընթացը չունին, բայց միշտ վերապահութեամբ մը և զգուշաւորութեամբ մը, առանց անխոհեմ չափազանցութիւններու մոլելու, որ քաղաքական հեռատեսութիւնը պարտք կը դնէ ամենուն և մասնաւորապէս մեզ՝ հայերու վրայ։

Այսուհետև օսմանցի չդառնալով՝ ինչպէս կ'ըսեն՝ արդէն անոր հետ և անկէ առաջ և մանաւանդ անկէ վերջ, մենք հայ եղած ենք, հայ մնացած և հայ պիտի մնանք։

Ի՞նչ պայմաններու տակ պիտի կազմուի ապագայ երեսփոխանական ժողովը, քրիստոնեայ տարրերը ինչ իրաւասութիւններով և չափերով պիտի ներկայացուին հոն։ Ճիշտ է թէև, որ ինչպէս եղաւ ռուսական առջի Դումաներուն մէջ՝ Թիւրքիայի մէջ պիտի չըլլան ընկերական դասակարգային հողի վրայ ծայրայեղ կուսակցութիւնք, սակայն անոնց տեղ պիտի բռնեն և միայն զանազան հպատակ ազգութեանց ձգտումները, պահանջները։ Եւ դրուած ըլլալով մահմեդական տարրին վերաբերումը դէպի հպատակ ցեղերը (մանաւանդ երիտասարդ-Թիւրքերուն), դրուած ըլլալով եւրոպական դաշնագիրներով հպատակ ցեղերու համար կանխորոշ առանձնաշնորհումներուն խընդիրները, դրուած ըլլալով եւրոպացոց շահն և որոշ ակնկալութիւնները, անոնց ֆինանսական և այլ կապերը, դժուար չպիտի ըլլայ գուշակել օսմ. երեսփոխանական ժողովին մէջն իսկ խիստ և բուռն հակառակութիւններ, որոնք անտարակոյս իրենց ազդեցութիւնը և ներշնչումը պիտի ունենան կառավարութեան ընթացքին վրայ, զայն երեսփոխանական ժողովին մեծամասն և իշխող տարրին փափաքանաց և ցանկութեան համաձայն ուղղելու չափ…

Եւ յետոյ խնդիր է, թէ ինչ պարագայից մէջն է, որ Եըլդըզի միապետը կը գիջանի իր ճնշած ժողովուրդներուն սահմանադրութիւն շնորհել։ Սուլթանը ինքնաբերաբա՞ր ըրաւ զայդ, թէ՞ չէ՝ երկրին մէկ շատ օրհնաւոր և կասկածելի պահանջին զոհացում տալու ինքնակամ մղումէն։ Եւ այդ երկիրը, որ դեռ երէկ իր հայրենակցաց արիւնը կը թափէր սառնասիրտ, այդքան հասունացած եղա՞ւ։ Արդեօք իրա՞ւ է, որ ձեռք բերուած յաջողութիւնը Մակեդոնիայի մէջ երիտասարդ-Թիւրքերու ազդեցութեան տակ առաջացած զինուորական ապստամբութենէն բղխեցաւ։ Ինչո՞ւ անպատճառ այս օրերը այդ շարժումները հոն, ինչո՞ւ Մակեդոնիան և ոչ այլուր։

Եւ զարմանալի զուգադիպութիւն մը չէ՞ նաև, որ այս շարժումները և սուլթանին այսքան դիւրին զիջողութիւնը, որ նոյնիսկ երիտասարդ-Թիւրքերուն զարմանք պատճառած է, կ'ըլլայ մակեդոնական խնդրոյն լուծման ամենաբուռն մէկ շրջանին մէջ, երբ Ռուսիա և Անգլիա՝ որոնց հակառակցութենէն միայն սուլթան կօգտուէր իր ընդդիմադրի դերին մէջ՝ կը համաձայնին ընդդէմ Թիւրքիոյ և ի նպաստ Մակեդոնիոյ քրիստոնէից, երբ Թիւրքիոյ խիղճին կու կրէտական միւսիւլմանները առաջարկել են երկու պատգամաւոր ընտրել Թիւրքական պարլամենտը ուղարկելու համար։ Կրետական քրիստոնեաները պատասխանել են, որ նրա՛նց համար գոյութիւն ունի միայն յունական պարլամենտը, այլ ոչ Թիւրքակա՛ն։

—

Կ. Պօլսում այժմ գործում է երկու կառավարութիւն. Քեամիլ-փաշայի կաբինէտը և երիտասարդ-Թիւրքերի կոմիտէտը։ Վերջինս օգնում է առաջինին կարգը վերականգնելու գործում։ («Б. В.»)

—

«Իկդամը» հաղորդում է, որ արտասահմանեան Թիւրքական դեսպանատներից խլված են մամուլը կաշառելու և լրտեսներ պահելու համար յատկացված գումարները։

—

Պօլսում առևտրական տներ ունեցող եւրօպացիները հաղորդում են առևտրի և արդիւնաբերութեան սաստկանալու մասին։

Նոր գաղափարների ազդեցութեան տակ՝ մաքսատան պաշտօնեաները հրաժարվում են ընդունված նուէրներից և ջանասիրութեամբ կատարում են իրանց պարտականութիւնները։ Թիւրքիայի հետ յարաբերութիւն ունեցող գործարանատէրերը մեծ նշանակութիւն են տալիս այդ հանգամանքին։

—

Թիւրք-բօլգարական սահմանագլխի վրա, Նեվրօկօպին մօտիկ, տեղի ունեցած միջադէպի մասին տարածված լուրը ճշտվում է։ Դէպքի տեղն է գնացել մի յատուկ յանձնաժողով քննութիւն կատարելու համար։ Կ. Պօլսի յոյն թերթերը մեղադրում են բօլգարներին, որ վերջիններս գիտութեամբ ստեղծում են սահմանային վէճեր։ Բօլգարական լրագիրները բողոքում են յոյների այդ փորձերի դէմ, որի նպատակն է բարդութիւններ առաջ բերել Թիւրքիայի և Բօլգարիայի յարաբերութիւնների մէջ։ («Рѣчь »)

—

Զինուորական մինիստրին յանձնարարված է կազմակերպել մի յատուկ պատերազմական զօրաբանակ՝ ուղարկելու կարաւաններ կողոպտող արաբական թափառաշրջիկների դէմ գործելու նպատակով։

Բացի դրանից, հայերի պահանջմամբ, զօրքեր են ուղարկվում Հայաստան ազգաբնակութիւնը քիւրդերից պաշտպանելու նպատակով։ («Рѣчь»)

—

Բօսֆօրի ափում գտնվող Բէյկօզի պալատը շտապով կարգի է բերվում և վերանորոգվում։ Սուլթան Աբդիւլ-Համիդը, ինչպէս հեռագրում են Պօլսից „Matin" լրագրին, տեղափոխվում է այդ պալատը ապրելու։ Սուլթանը ցանկութիւն է յայտնել հեռանալ Ելդըզ-Քէօշկից գլխաւորապէս այն պատճառով, որ ուզում է ազատվել իրան անհաճոյ ժողովրդական մանիֆեստացիաներից, այլ և Ելդըզի մթնոլորտից, որտեղ նա 32 տարի շարունակ մնում է առանց դուրս գալու, եթէ չը հաշւելու լինենք ուրբաթ օրերը սելամլըք գնալը։ («Б. В.»)

—

«Serveti Finoun»-ը կրետական հարցի առիթով գրած իր առաջնորդողում յոյս է յայտնում, որ Յունաստանը, աչքի առաջ ունենալով Թիւրքիայի սահմանադրութեան վերականգնումը, կը հրաժարվի Կրետէն Յունաստանին միացնելու ծրագրից։ Լրագիրը պահանջում է, որ Կրետէ կղզին իր պատգամաւորները ուղարկէ պարլամենտ։ Այն պետութիւնները, որոնք պատրաստակամութիւն են յայտնել աջակցել Թիւրքիային,—ասում է լրագիրը,—պարտաւոր են օգնել նրան վերադարձնելու Կրետէ կղզին։

—

Թիւրքական ընտրողական օրէնքի բնագիրը արդէն ուղարկված է գաւառական իշխանութիւններին։ Ընտրութիւնները կատարվելու են ոչ ուղղակի։ 500 ընտրողներ ընտրելու են մի-մի պատուիրակ։ Ընտրողական շրջանները համապատասխանում են սանջակներին։ 50 հազար ընտրողներ կուղարկեն պարլամենտ մի պատգամաւոր։ Յաջորդ որոշումները հետևեալներն են. 50—75 հազար արական ազգաբնակութիւն ունեցող սանջակները ուղարկում են մի-մի պատգամաւոր, 75—125 հազարը՝ երկու, 125—175 հազարը՝ երեք, իսկ 175—220 հազարը՝ չորս։ Ընտրողական ակտիվ իրաւունք է վայելում 25 տարեկան հասակ ունեցող և որևէ տուրք վճարող ամեն մի Թիւրք։ Ընտրողական իրաւունք են վայելում նաև գիւղացիները։ Ընտրողական պասսիվ իրաւունք կարող են վայելել միայն 30 տարեկան հասակ ունեցողները։ Վարչական պաշտօնեաները ընտրութիւններին չեն մասնակցում։ Ընտրութիւնների ղեկավարութիւնը գտնվում է առանձին ընտրողական յանձնաժողովների ձեռքում, որոնց չեն մասնակցում պաշտօնեաները։ («Рѣчь»)

—

Մակեդօնիայից Սօֆիա վերադարձող բօլգարացի տուրիստները, ի թիւս որոնց նաև բօլգարական մայրաքաղաքի ականաւոր անձինք, մեծ լաւատեսութեամբ են խօսում Թիւրքիայի իրերի նոր դրութեան մասին։

Նրանց կարծիքով երիտասարդ-Թիւրքերը հաւասարապէս ուշադիր են դէպի բոլոր ազգութիւնները, բայց առաւելապէս նշանակութիւն են տալիս բօլգարներին։ «Պահանջեցէք, ինչ որ կամենում էք, միայն թէ յիշեցէք, որ Թիւրքիան պէտք է մնայ ամբողջ»,—ասում են երիտասարդ-Թիւրքերի պարագլուխները բօլգարներին։ Երիտասարդ-Թիւրքերը և մակեդօնական բօլգարները միասին Սօլունում մշակում են ընտրութիւնների ծրագիրը և սահմանադրութեան փոփոխութիւնների ծրագիրը։ Այդ նախագծերից մի քանիսը արդէն յայտնի են այժմից. մի պալատ, ընդհանուր յարաբերական ընտրողական իրաւունք, պատասխանատու մինիստրութիւն, համայնքների, շրջանների և վիճակների համար ինքնավարութիւն, ապակենտրոնացում, որքան որ նա չէ վնասում ամբողջութեանը, նախնական պարտադիր ուսում, ընդհանուր զինուորական ծառայութիւն՝ վարժութիւնների ուսուցումը Թիւրքական լեզուով, սուլթանական և վակուֆային հողերը դարձնել պետական, խոշոր սեփականութիւնների յետ գնումը, օտար պետութիւնների միջամտութեան արգելումը։ Ազգային ինքնավարութիւնների ուրուագիծը մանրամասնօրէն դեռ չէ հաղորդվում։ Մատնանշվում է միայն այն, որ Թիւրքական լեզուի հետ միասին շրջաններում տեղական լեզուներն էլ կը մտցվեն իբրև պաշտօնական։ Բօլգարական էկզարխութիւնը կը պահպանի իր եկեղեցական իրաւունքները ամբողջ Թիւրքիայում, սակայն դպրոցները դուրս կը հանվեն նրա իրաւասութիւնից։ («Р. В.»)

—

„Р. В." լրագրի թղթակիցը գրում է Պօլսից.

«Չէ կարելի չը զարմանալ այն ույժի վրա, որ միանգամից ձեռք բերին ազատամիտ շարժման կուսակիցները։ Ընդհանուր տպաւորութիւնը այնպէս է, որ վարագոյրի ետևում ստեղծված է մի նոր կառավարութիւն, յայտնի չէ ումից և քանի՞ հոգուց բաղկացած, և որ այդ կառավարութիւնը, ոչ մի պատասխանատուութիւն չը դնելով սուլթանի վրա, ընդհակառակը, աշխատելով ազգաբնակութեան մէջ գոհունակութեան զգացմունքներ ներշնչել դէպի փադիշահը՝ նրա արած «հիանալի և ազնիւ ժեստի ու սահմանադրութիւն շնորհելու համար», թելադրում է իշխանութեան գլուխ անցնողներին իր բոլոր կարգադրութիւններն ու հրամանները։ Այդ գաղտնի կառավարութիւնը այժմ, երևի, աւելի է զօրեղ, քան նոյնիսկ սուլթանը։ Այլապէս չէր կարելի բացատրել վերջին օրերս կատարված մի քանի փաստերը, ինչպէս են՝ սուլթանի զիջումները, նրա սիրելիների կալանաւորութիւններն ու բանտարկութիւնները, որոնց պաշտպանելու համար փորձ անգամ չէ արել նա։ Նոյնիսկ խօսում են, որ սուլթանը սելամլըքի ժամանակ ասել է. «Ես շրջապատված էի դաւաճաններով»։

Անցեալ շաբաթ ես ներկայ էի Թաքսիմի հասարակական այգում տեղի ունեցած միտինգին, որ կազմակերպել էր «օսմանեան կրթված երիտասարդութեան կոմիտէտը»։ Միտինգը անցաւ մեծ կարգապահութեամբ. երաժշտական նուագախումբը մի քանի անգամ նուագեց Թիւրքական ազգային «Համիդիէ» մարշը, ճառեր արտասանվեցին զանազան լեզուներով. Նրանց շատ ծափահարեցին։ Այգում բոլորովին ոստիկանութիւն չը կար։ Առհասարակ այժմ ոստիկանութիւնը քաղաքում շատ քիչ անելիք ունի, քան առաջ էր, չը նայելով որ աղմկալի մանիֆեստացիաները շատ են կրկնվում. ցերեկները դրօշակներով և գիշերները թղթէ գունաւոր լապտերներով խմբերը պտտում են փողոցները և կանգնելով կառավարչական հաստատութիւնների ու մինիստրների տների առաջ կանչում են՝ «փադիշահին երկար տարիներ», «կեցցէ սահմանադրութիւնը»։

Հանդէս են եկել սահմանադրական էմբլեմային զանազան նշաններ. կարմիր ժապաւէններ՝ ոսկետառ մակագրութիւններով, իբրև գօտի, կարմիր և սպիտակ ժապաւէններից նշանակապներ, նոյնպիսի նշանակապներ ուսադիրների վրա և այլն։ Երէկ Պերայում ես տեսայ Թիւրքական շատ օֆիցերներ ու ոստիկաններ, որոնք զարդարել էին իրանց այդպիսի նշանակապներով։

Զօրքերի հաւատարմութեան երդումի արարողութեան ժամանակ սովորաբար ներկայ են լինում «Միութեան և առաջադիմութեան կոմիտէտի» մէկ կամ երկու անդամ։ Այս կուսակցութիւնը անլեգալ է և այլ պարագաներում կառավարութիւնը նրան կը հալածէր, իբրև յեղափոխական և յանցաւոր կուսակցութիւն։ Եթէ վերջին դէպքերում այդչափ խոշոր դեր խաղացող այդ կոմիտէտի հետ նոյնը չը պատահեց, բացառապէս այն պատճառով, որ շարժումը սկսվեց զօրքի մէջ, և կոմիտէտի կազմի մէջ հէնց սկզբից և եթ մտան շատ օֆիցերներ։ Երբ Փոքր Ասիայից Սալոնիկ ուղարկված զօրքերը հրաժարվեցին ճնշել ապստամբներին, կառավարութիւնը ընկաւ կրիտիկական դրութեան մէջ. նախկին մեծ վէզիր Ֆերիդ-փաշան խորհուրդ տուեց զիջումն անել և սահմանադրութիւն տալ, բայց սուլթանը դժգոհ մնաց այդ խորհրդից և հեռացրեց նրան վէզիրութիւնից։ Սայիդ-փաշան կարողացաւ համոզել և սուլթանը վերջ ի վերջոյ հրատարակեց սահմանադրութեան իրադէն։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

—

Թաւրիզ, 6 օգոստոսի

Երէկ հրացանաձգութիւն չը կար։ Էյն-ուդ-Դօվլէն մի հազար ձիաւորով կանգ առաւ քաղաքից 20 վերստ հեռաւորութեան վրա և վճռեց ակտիվ միջոցներ չը դիմել մինչև միւս զօրքերի գալը, աշխատելով ըստ հնարաւորութեան հանգստացնել յեղափոխականներին կօմպրօմիսներ ճանապարհով։ («Հ. Վ.»)

—

«Frankfurter Zeitung» լրագրի Թեհրանի թղթակիցը, որ լաւատեղեակ է Պարսկաստանի իրերի դրութեանը, հետևեալ ձևով է բնորոշում Թաւրիզում մէջլիսի կուսակիցների և Պարսկաստանի հին կարգերի համախոհների մէջև դեռ ևս շարունակվող կռիւը։

«Թաւրիզի բնակիչները,—գրում է նա,—որոնց երակների մէջ Թիւրքական արիւն է հոսում,—իսկ այդ հանգամանքը աչքից չը պիտի տալ,—դեռ ևս քաջաբար պաշտպանվում են։ Միայն այն դէպքում, եթէ շահին աջողվի վերականգնել իր իշխանութիւնը Թաւրիզում, նա կարող է իրան տէր համարել Պարսկաստանում։ Բայց եթէ բարենորոգումներ պահանջող կուսակցութիւնը Թաւրիզում գերակշռելու լինի, պէտք է ուրեմն սպասել, որ Թեհրանում և ամբողջ երկրում յեղափոխական շարժումը կը բռնկվի նորից։ Ապստամբութիւնների սաստկացման նշաններն այժմից արդէն նկատվում են։

Յուլիսի 30-ին պարսից դեսպանատան շրջաններում տարածվել է հետևեալ սենսացիօն լուրը.

Թաւրիզի պատուհաս, Ղարադաղի կատաղի ձիաւորների առաջնորդ Ռահիմ-խանը, շարունակ կռիւներ և ընդհարումներ ունենալով Թաւրիզի քաղաքապետ Սուջա-Նիզամի հետ, կռւել է նաև Թեհրանի հետ և յայտարարել իրան յեղափոխական։

Սաթթար-խանը նրա ցանկութեանը՝ աջակցելու անջումանների կուսակիցներին՝ յոռետեսութեամբ է վերաբերվել և առայժմ հրաժարվել է նրա օգնութիւնից, որովհետև շատ հասկանալի պատճառով չէ վստահանում նրան։

Ռահիմ-խանը վճռել է գործել անկախ և, ասում են, սարսափ է ազդել Թաւրիզը «վերցնելու» եկած պարսկական զօրքի վրա։ Վերջինիս առաջնորդները վախենում են, որ Ռահիմ-խանը նրանց դէմ կը սկսէ գործել թիկունքից։ Թեհրանից եկած զօրքերի մէջ ռազմամթերքների և ուտեստի պաշարի մեծ կարիք է զգացվում։

Վերջին տեղեկութիւնների համաձայն, ներկայումս Թաւրիզի եւրօպական ազգաբնակութեան կէս մասն է մնացել, միւսները փախել են «մահվան քաղաքից», ինչպէս իրանք պարսիկներն են անուանում։ («Р. Ут.»)

—

Թեհրանից «Рѣчь» լրագրին հեռագրում են.

«Ժանդարմների հրամանատարը հանել է տուել գերեզմանից ազատագրական շարժման առաջին զոհ Աբդիւլ Համիդի դիակը և այրել նրան խարոյկի վրա։ Նրա աճիւնը տարվեց Բաղէ-շահին։ Աբդիւլ-Համիդը ընդհանուր յարգանք էր վայելում, ուստի նրա վրա գործադրված այդ սրբապղծութիւնը մեծ վրդովմունք և խլրտում առաջացրեց։ Յուլիսի 29-ին, երեկոյեան, ազգային տօնի նախօրեակին, ազդեցիկ պարսիկներից մէկի տանը հաւաքվելով 1000 հոգի՝ կրակոտ ճառեր արտասանեցին շահի դէմ, կոչ անելով գահընկէց անել նրան, մարգարէի սերունդ Աբդիւլ Համիդի գերեզմանը քանդելու և դիակը այրելու համար, անուանելով նրան հաւատուրաց։

Ամբողջ Պարսկաստանում այժմ ծաղկում է պրօվօկատօրութիւնը։ Գաղտնի ոստիկանները ժողովներում հայհոյում են շահին և կոչ անում պաշտպանել սահմանադրութիւնը, և ապա ծափահարող ունկնդիրներին կալանաւորում են և բանտ ուղարկում։

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

—

«Бирж. Вѣд.» թերթի թղթակիցը շարունակում է Սալօնիկից հետաքրքրական տեղեկութիւններ հաղորդել Մակեդօնիայում տեղի ունեցող անցքերի մասին։ Անցեալ օրը մենք համարեա թէ ամբողջապէս բերեցինք նրա մի թղթակցութեան թարգմանութիւնը. այժմ քաղուածօրէն բերում ենք նրա մի այլ թղթակցութիւնը։

Երիտասարդ Թիւրքերի վաղեմի բաղձանքն է,—ասում է նա,—վերջ դնել եւրօպական միջամտութեանը ի. Իրան գործերի մէջ և դնել իրանց հայրենիքը քաղաքակրթված, զօրաւոր պետութիւնների շարքում։ Այդ ուղղութեամբ կօմիտէտը արդէն սկսել է շատ մեծ թափով աշխատել։

Կօմիտէտը մի բիւջէտ է մշակել, որից երևում է, որ սուլթանի մօտ 325 միլիօն Թիւրքական լիրա պետական փողեր կան։ Այդ գումարից որոշված է սուլթանին թողնել 125 միլիօն լիրա, իսկ 200 միլիօնը յետ պահանջեն պետական գանձարանին յանձնելու։ Այդ գումարների մասին կօմիտէտը արդէն բանակցութիւններ է կատարել Լօնդօնի, Նիւ-Եօրկի և Պարիզի բանկերի հետ, ուր և պահված են սուլթանի հարստութիւնները։

Լրտեսների ցանցի վրա ամեն տարի ծախսվում էր $3^1/_2$ միլիօն լիրա, ճիշտ և ճիշտ այն գումարը, որ պակասում էր զօրքին բաւարարութիւն տալու համար։ Բոլոր բանտերից ազատված են 5000 բանտարկեալներ, որոնց վրա ծախսվում էր, հաշւելով միմիայն 300 գրամ հաց օրական իւրաքանչիւրին, մի բաւականին խոշոր գումար։

Որոշված է՝ բոլոր անշարժ կալուածները, որ Աբդիւլ Համիդը գրաւել էր, վերադարձնել երկրին, պետական եկամուտները լրացնելու համար։ Մի խօսքով, կօմիտէտի արած հաշիւների համաձայն, բոլոր պետական ծախսերը ծածկելուց յետոյ, գանձարանում պէտք է մնայ տարեկան 30,000,000 լիրա։

Հէնց առաջին պատեհ առիթում Ռուսաստանին պիտի վճարվի կօնտրիբուցիայի մնացած պարտքի մասը և այն բոլոր պետական պարտքերը, որոնց համար, ինչպէս ասում են երիտասարդ-Թիւրքերը, փող կը ճարվի, որովհետև եկամուտի աղբիւրներ Թիւրքիայում շատ կան. հարկաւոր է միայն երկրի ֆինանսները բարեխիղճ կերպով վարել։

Յետոյ կօմիտէտը պիտի շտապի զօրաւոր նաւատորմիղ ստեղծել։ «Եթէ մենք զօրաւոր նաւատորմիղ ունենայինք, միթէ Կրետէի հարցը այնպէս թեթև կերպով կը որոշվէր»,—ասում էին թղթակցին մի քանի երիտասարդ-Թիւրքեր։

Մի խօսքով, շարժման նպատակն է օսմանցիների մի ուժեղ կայսրութիւն ստեղծել և ոչ մի բանով յետ չը մնալ իրանց զօրաւոր հարևաններից։

Շարժման ղեկավարները և բոլոր մտածող Թիւրքերը կատարելապէս հաւատացած են, որ իրանց կաջողվի բոլոր նպատակներին հասնել, եթէ միայն Եւրօպան նրանց չը խանգարէ։

Ամենից շատ նրանք վախենում են Գերմանիայի միջամտութիւնից, որը Թիւրքական ազգային շարժման յաղթանակից յետոյ կը կորցնի իր բոլոր այժմեան օգուտները Թիւրքիայում։ Երիտասարդ-Թիւրքերը վախենում են, որ Վիլհէլմ կայսրը սուլթանին, բարեկամական ծառայութիւն անելու քօղի տակ, իր զօրքերը առաջարկէ շարժումը ճնշելու համար։

Սուլթանի ոչ մի քայլին, որը իբր թէ ընդառաջ է գնում արված պահանջներին, Թիւրքերը հաւատ չեն ընծայում, համարելով փադիշահին մի շատ խորամանկ ու նենգամիտ հակառակորդ։ Այդ պատճառով էլ կօմիտէտը նպատակ ունի մի կերպ արքունական պալատը մտնել, բռնել նրան ու տանել այնտեղից, իսկ յետոյ անվտանգ դարձնել նրա բոլոր խորհրդականներին ու մերձաւորներին և այդպիսով մէկ անգամից վերջ դնել հին ռէժիմին։

Աբդիւլ-Համիդի կեանքին ոչինչ չէ սպառնում նախ նրա համար, որ նա ծեր է և նրա օրերը համարված են, և բացի դրանից երիտասարդ Թիւրքերը հաւատացած են, որ սուլթանը, մնալով միայնակ, առանց օգնականների, վախից կը համաձայնի բոլոր պահանջների հետ։ Մինչդեռ այդպիսի փոքր ի շատէ հանդարտ լուծումը աւելի ձեռնտու է երիտասարդ-Թիւրքերին, քան արիւնահեղ յեղաշրջումը։

Ցոյցի ժամանակ Պօլսում, երբ 50,000 բազմութիւնը եկաւ պալատի մօտ և սուլթանը պատշգամբ դուրս գալով ճառ արտասանեց, նրան խնդրում էին ցած իջնել և ժողովրդի մօտ գնալ, մտադրութիւն ունենալով բռնել նրան և յետոյ պալատը խուժել։ Բայց սուլթանի մերձաւորները խնդրեցին նրան՝ չը մտնել իրանց դահիճների ձեռքը, և սուլթանը հրաժարվեց իջնել։ Սուլթանի մօտ պալատում եղած պահապան զօրքի և բոլոր հին ռէժիմին հաւատարիմ ծառայողների թիւը մօտ 40,000 մարդ են հաշւում։ Այժմ կօմիտէտի բոլոր ջանքերը ուղղված են այն բանին, որ կարողանան Աբդիւլ Համիդի գվարդիան էլ միւս զօրքերի կողմը գրաւել, որպէսզի այդպիսով այլևս ընդհարում տեղի չունենայ զօրքերի մէջև, երբ կուզենան պալատը խուժել։ Յոյս ունեն, որ այդ էլ շուտով կաջողվի։ Ուստի պէտք է սպասել, որ շատ մօտիկ ապագայում երիտասարդ-Թիւրքերը Ստամբուլում սուլթանի մերձաւորներին էլ կը մաքրեն։

Մինչ երիտասարդ-Թիւրքերը ջանքեր են գործ դնում կանգնեցնել քրիստոնեաների շարժումը, բոլոր ապստամբներին հրաւիրելով Թիւրքական միութեան դրօշակի տակ մտնել,—ռէակցիան արդէն աջողվել է նոր յունական հրոսակախմբեր հաւաքել, որոնք և արդէն լոյս են ընկել Մօնաստիրի վիլայէթում։ Նրանց ետևից զօրքեր են ուղարկված, որոնց հրամայված է համոզել նրանց վայր դնել զէնքերը և չը փչացնել այսպէս լաւ սկսված գործը։ Իսկ եթէ նրանք ընդդիմադրութիւն ցոյց տան, հրամայված է անխնայ կերպով ոչնչացնել նրանց։ Թիւրքերը յոյս ունեն, որ առաջինը տեղի կունենայ, որպէսզի որևէ կօնֆլիկտից խուսափած լինեն և առիթ չը տան Եւրօպային միջամտելու։

«Ներկայումս հաճութեամբ կարելի է նկատել,—շարունակում է թղթակիցը մի քանի տող յետոյ,—որ դեռ երէկվայ կատաղի թշնամիները այսօր գրկախառնվում ու համբուրվում են, ուտում և խմում են միասին, կազմելով մի ամբողջութիւն, որը ծարաւի է դրութիւնը բարելաւելուն։ Սակայն Թիւրքերի համբոյրներին քրիստոնեաները այնուամենայնիւ վերաբերվում են իբրև Յուդայի համբոյրի, մի առանձին վախ զգալով գալիքից»։

Թղթակցութիւնը վերջանում է հետևեալ տողերով.

«Ներկայ րօպէում կօմիտէտը սուլթանին հետևեալ պահանջներն է ներկայացրել. 1) «Բիազ-Գուլէի մօտ գտնվող տեղը, շէնքերով հանդերձ յանձնել կօմիտէտի տրամադրութեանը, որը մտադիր է այդտեղ մէջլիսը տեղաւորել, 2) առանց վարձատրութեան մէջլիսի տրամադրութեան տակ դնել երկրի բոլոր հեռագրատները և 3) թոյլատրել ազատ կերպով մուտք գործելու եւրօպական թերթերին»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

(Սեփհ. թղթակց.)

—

Ախալցխա, 4 օգոստոսի

Կիրակի, ամսիս 3-ին, ս. Փրկիչ եկեղեցում տեղի ունեցաւ Ախալցխայի հայ ծխականների յուլիսի 27-ին կայացած ծխական ժողովի շարունակութիւնը առաջնորդի № 557 գրած առաջարկութեան համաձայն՝ ընտրելու 3—5 գիտակից անձերից մի քննիչ յանձնաժողով, իր ներկայացուցչի հետ քննելու Ախալցխայի հայ դպրոցների տեսուչ

գայ, որ այս անգամ դիւանագիտութիւնը խաղցնելով պիտի չկրնար մէջէն ելլել։

Կարելի չէ՞ ուրեմն ենթադրել, որ այս հաւանական միջամտութեան դէմը առնելու համար՝ ինչպէս 1876-ին Բոսնա-Հերսէկի և Բուլղարիոյ խնդրոց ժամանակը՝ մէկ քարով երկու թռչուն զարնելու քաղաքականութեամբ մը, սուլթանը խաղ մը կը խաղայ Եւրոպային և երիտասարդ Թիւրքերուն միանգամայն և երկուքը միասին, Եւրոպային և հպատակ քրիստոնեաներուն։

Այնուամենայնիւ բոլորովին յոռետես ալ ըլլալու չէ և լաւագոյն է սպասել արդիւնքներուն, որոշապէս դատելու համար։ Մօտիկ ապագան պիտի ցուցնէ արդարև, թէ ի՞ր աստիճան հիմ ունին այդ տրուած ազատութիւնները։

Բայց աւելորդ չըլլար թերևս քաղուածք մը հոստեղի արաբ-ազգայնական թերթէ մը, որուն կարծիքը մեր վերի ենթադրութիւնը կը հաստատէ. Կահիրէի «Էլ-լէվա» մեռած հռչակաւոր Մուսթաֆա Քամիլ փաշայի թերթը, որուն կապերը սուլթանի, անոր կառավարութեան կամ գէթ անոր դրամին հետ... ծանօթ են, և որ սուլթանի Եգիպտոսի տիրապետութեան (?) թմբուկն ու բերանն է, կըսէ. «Սուլթանին ըրածը կապացուցանէ մեր վերջերս ըսածները. թէ անգիտակ Եւրոպայի կողմէն Թիւրք կայսրութեան դէմ լարուած դաւին, անոնց առաջը առնելու կը պատրաստուի։ Հաւատացեալներուն գերագոյն պետը արդարև նկատեց, որ ցարդ ինքզինք Թիւրքիոյ բարեկամ հռչակող Անգլիան, որ զինք պաշտպանած էր Ռուսիոյ ոտնձգութեանց դէմ, ձեռք կուտայ ցարին, միասին օսմանեան պետութեան կործանումին համար, կամ զոնէ անոր եւրոպական մէկ մասին անջատման եւ անհետացման»։

Եւ ապա թուումն մասանց ընելով անոնց գրգռութեան տակ Մակեդոնիոյ մէջ եղած խռովութիւնը, Եգիպտոսի գրաւումը, Կրետէի անջատումը և այլն, արաբ ազգայնականներուն բերանը կը շարունակէ.

«Սուլթանը մէկ բառով Ռուսիոյ և Անգլիոյ դաւերուն առաջը առաւ և միւս պետութեանց միջամտութիւններուն սանձ մը դրաւ՝ իր ժողովրդեան շնորհելով սահմանադրութիւն մը, որ գոնէ վստահ ենք թէ այս անգամ ետ պիտի չառնէ»։

Յուսանք մենք ալ, մենք հայերս ամենէն աւելի, որ պէտք ունինք մեր ուժասպառ վիճակին մէջ քիչ մը հանգստի, պատառ մը հացի, կազդուրուելու և աշխատելու խաղաղիկ մեր քանդուած և աւեր օճախը շէնցնելու համար։

Բայց... այնքան դժբաղդութիւններէն վերջը, որ դեռ կը շարունակուին, այնքան զոհողութիւններէն, արիւնհեղութիւններէն վերջ, այն ժողովրդին ձեռօք որ վաղուան սահմանադրական ժողովին տիրապետող տարրը պիտի ըլլայ, պարտք և իրաւունք ունինք վերապահութեամբ ընդունելու եղածները։ Եւ համակերպելով հանդերձ, աշխատելով, աջակցելով հանդերձ, սպասելու ենք դէպքերի ընթացքին, յուսալով և մաղթելով որ դառն յուսախաբութեամբ մը մեր այս սկսնակ, բայց արդարացի ուրախութեանց մէջ մեզ հետ և մեր հաւատքը չը մեռնի։

Մին

3. Ուսուֆեանի ներկայացրած 1907—8 թ. ուսումն. տեղեկագիրը։ Ժողովին եկել էին մօտ 200 ծխականներ։ Նախագահում էր փոխանորդ Սիօն վարդապետը։ Չէին եկել ոչ հոգաբարձուները, ոչ տեսուչը, իսկ նրանց կողմնակիցներն էլ ժողովի ընթացքում հետզհետէ հեռանալով մինչեւ վերջը շատ քչերն էին մնացել։ Մասնաժողովի անդամներ միաձայն ընտրվեցին հետեւեալ հինգ անձերը. պ. պ. Ստեփան Մալխասեան, բժ. 3. Այվազեան, Յարութիւն Յակոբեան, Միքայէլ Շահնեան եւ Ստեփան Կարապետեան։

Այս հինգ անդամների թեկնածութիւնը դրվել էր բողոքող ծխականների կողմից, որոնց մասին նախօրօք առանձին տպագրված թերթեր էին ցրել ժողովրդի մէջ։ Այս քննութիւնը պահանջել էր ինքը տեսուչը, որտեղ մասնակցելու էր ինքը բացատրութիւն տալու։ Սակայն քննիչ մասնաժողովի հետեւեալ օրը, ամսիս 4-ին, պ. տեսուչը քաղաքից բոլորովին հեռացաւ ընդհանուր զարմանք պատճառելով հասարակութեան։ Ինչպէս ասում են, գնում է Երեւան ուսուցչութեան պաշտօնով, յոյսը կտրելով Ախալցխայից։ Սակայն սա ինչ խաղ է, չենք հասկանում։ Շատերը հաւատացած են, որ պ. Ուսուֆեանի այդ քննութեան պահանջը լոկ մի մանեւր էր հասարակութեան աչքերին թոզ փչելու եւ դպրոցի գործը ձգձգելու։ Ի մէջի այլոց ժողովը միաձայն որոշել էր, որ այս կիրակի, օգոստոսի 10-ին, անպատճառ հոգաբարձ. ընտրութիւն լինի։

Ծխական

ՆՈՐԻՑ ԼՈՒՐԵՐ

◆ Վաղը դէպի Անի է ուղարկվում հողաչափ, որը պէտք է պատրաստէ Անիի պեղումների ամբողջ շրջանի պլանը։ Հողաչափը կը գործէ այնտեղ երկու շաբաթ եւ պլանի վրա կը նշանակէ բոլոր կէտերը յատուկ համարներով։ Պլանի կազմութեանը պէտք է հսկէ ինքը պրոֆեսոր Մառը։

◆ Թիֆլիսի նպաստամատոյց յանձնաժողովը, տեղեկանալով Մատթէոս վարդապետ Մատթէոսեանի զեկուցագրից Ալեքսանդրապօլի գաւառի Ջլովխան գիւղի սոսկալի վնասների մասին, ուղարկել է այնտեղ իր լիազոր Ս. Տէր-Պօղոսեանին այցելելու գիւղը եւ հասցնելու նախնական օժանդակութիւն։

◆ Մեզ հաղորդում են, որ Մեղրի գիւղի հայուհիները կազմելով ժողով որոշել են բանալ Թիֆլիսի հայոց տնայնագործական ընկերութեան ճիւղ։ Թղթին ստորագրել են կանոնադրութեամբ պահանջվող հինգ անձ։ Ընկերութեան վարչութիւնը իր կողմից ընդունել է առաջարկը եւ այդ մասին յայտնել է Գանձակի եւ Թիֆլիսի նահանգապետներին ի գիտութիւն։ Մեղրիի ճիւղը կարող է սկսել այժմեանից իր կանոնաւոր գործունէութիւնը։ Նա արդէն պատուիրել է գործիքներ եւ սեպտեմբերից մտադիր է բանալ արհեստանոց գիւղը մէջ։

◆ Թիֆլիսում ապրող շատ Թիւրքահայեր պատրաստութիւններ են տեսնում հայրենիք վերադառնալու։ Սակայն շատերն էլ Թիւրքիայից ստացված վերջին հակասական լուրերի ազդեցութեան տակ յետաձգում են վերադառնալու որոշումը։

◆ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը մտադիր է ներկայ ամսի վերջում ժողովել իր անդամներին խորհրդակցելու աշնանային համագումար հրաւիրելու առաջարկի մասին։

◆ Մեզ հաղորդում են, որ օգոստոսի 2-ից բացված է ջուլհակութեան արհեստանոց Ալէքսանդրօպօլի գաւառի Բէշքիշքեանդ գիւղում։ Ընդամենը ներկայումս այդ գաւառում գործում են չորս արհեստանոց՝ Համամլուում, Աղըզլայում, Ղշլաղում եւ Բէշքիշքեանդում։ Խնդրութիւն կայ բանալ արհեստանոցներ նաեւ Մնչուխլու, Փամբ եւ Մէլիքքեանդ գիւղերում։

◆ Երկու օր սրանից առաջ Համամլի գիւղը ուղարկվեց ներկարարութեան մասնագէտ Բէգումեան, որը այնտեղ պէտք է ցոյց տայ բուրդ ներկելու համար գործածվող ալիզարինի ներկերը։

◆ Մեզ հաղորդում են, որ Մոսկվայի կլիմայական ցուցահանդէսին մասնակցելու ցանկութիւն են յայտնել Կովկասից մի քանի գիւղատնտեսներ եւ հիմնարկութիւններ, եւ նրանց թւում բօտանիկական այգին, Կօրօնան եւ մի քանի գինեգործներ։

◆ Երեկվանից Թիֆլիսում օդը փոքր ինչ զովացաւ շրջակայքում եւ քաղաքում եկած անձրեւների պատճառով։

◆ Անդրկովկասեան երկաթուղիների կառավարչի կարգադրութեան համաձայն, երկաթուղային կայարաններում եռացրած ջուր են պահում։

◆ Թիֆլիսի քաղաքային առեւտրա տնտեսական մարմնի գործակալների տեղեկութիւնների համաձայն, քաղաքի շատ տեղերում հացթուխները հրաժարվում են հացը վաճառել նոր էժանացրած սակագնով։

◆ Օգոստոսի 5-ին Թիֆլիսի նահանգի ազնուականութեան պատգամաւորների եւ պարագլուխների ժողովը, որ արտակարգ կերպով գումարված էր պրոֆ. Վասիլի Մ. Պետրիաշվիլու մահվան առիթով, որոշեց յարգել հանգուցեալի յիշատակը յոտնկայս, հոգեհանգիստ կատարել, պսակ դնել նրա դագաղի վրա եւ հանգուցեալի այրիին խոր ցաւակցութիւն յայտնել։

◆ Օգոստոսի 6-ին, երեկոյեան 7 ժամին, Թիֆլիսի մէշչանական վարչութեան մէջ կայացաւ մասնաւոր խորհրդակցութիւն մէշչանների աւագի ընտրութեան հարցի առիթով։ Ներկայ էին 31 լիազօրներ, որոնք մանրամասն քննութեան առան առաջարկված 10 թեկնածուներից իւրաքանչիւրի յատկութիւնները։ Պահանջ դրվեց, ի մէջի այլոց, որ նոր աւագը անպատճառ գիտենայ երեք լեզու՝ ռուսերէն, հայերէն եւ վրացերէն։ Նոյն ժողովում վճռվեց, որ շուտով մի նոր ժողով կայացվի, ընտրվի մի առանձին մասնաժողով 5 անդամից բաղկացած, որին եւ պարտաւորեցնել եղած թեկնածուներից մէկին մատնանշել, որ համապատասխան լինէր աւագից պահանջվելիք արժանիքներին։ Հաւանական ընտրելիներ համարվում են պ.պ. Աֆրիաժեան, Բէլեայեվ, Առաքելեան եւ Վօզօպլեանով։

◆ Ամսիս 4-ին վերջացան Բ. Հ. Կ. միութեան բացած մանր վարկի հաշւապահական կուրսերի քննութիւնները։ 40 ունկնդիրներից գերազանց (ОТЛИЧНЫЯ) վկայական ստացան հետեւեալ ուսուցիչները. 1) Հախնազարեանց Յարութիւն, 2) Շահվերդեան Ալէքսանդր, 3) Քոչարեան Յակոբ, 4) Շահնազարեան Արշակ, 5) Մելիք-Շահնազարեանց օր. Համասփիւռ, 6) Տէր-Գրիգորեան Համայեակ, 7) Մինասեան Արամ, 8) Շահինեան Ա., 9) Յարութիւնեան Մելիտոն, 10) Յովհաննեան Յովհաննէս, 11) Վարոնին, 12) Կալինեան։ Լաւ վկայական ստացան՝ 1) Թորոսեան Թէոդորոս, 2) Արշալոյս Գրիգորեան, 3) Օհանեան Սահակ, 4) օր. Ս. Շահնազարեան եւ այլն, թւով 22 հոգի։ Բաւարար ստացան 4 հոգի։ Ընդամենը 40 հոգի։

◆ Երէկ Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամ Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկ քաղաքային դպրոցական մասնաժողովի անդամների հետ դիտեց այն տները, որոնք յատկացվելու են քաղաքային դպրոցների համար։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիֆլիսի ոստիկանապետը յայտնել է պրիստաւներին, որ սրանք էլ իրանց հերթին իմացնեն իրանց ենթակայ պաշտօնեաներին, որ խիստ կերպով արգելվում է օգտվել գիշերային դռնապաններից եւ պահապաններից անձնական յանձնարարութիւններ կատարելու համար եւ որ գիշերային պահապանները եւ դռնապանները նշանակվում են բացառապէս ազգաբնակչութեան գոյքը եւ կեանքը պաշտպանելու եւ կարգ ու կանոնը պահելու համար։

◆ Թիֆլիսի ժամ. գեն.-նահանգապետի կարգադրութեամբ Կալէշի գ. բնակիչ Նիկոլայ Կօզլովսկին աքսորվում է հայրենիք իբրեւ հասարակութեան համար վտանգաւոր անձն։

◆ Թիֆլիսի ժամ. գեն.-նահանգապետի կարգադրութեամբ զինւորական դրութեան ամբողջ ժամանակաշրջանում փակվում են 7 րդ քաղաքամասում հետեւեալ գինետները. Ֆեօդոր Կօյումջէի՝ Լազարեւսկի եւ Կօնստանդինովսկի փողոցները անկիւնում, Պաւել Նանուաժանի՝ Կօնստ. եւ Ռօզովայա փողոցները անկիւնում, Լուարսաբի՝ Լազարեւսկի եւ Ռօզովայա փողոցները անկիւնում, Իարչօ Քալանթարեանի եւ Սերգէյ Սկօեվի՝ Լազարեւսկի փող. եւ Արշակ Մերաբովի՝ Լազարեւսկի փողոց։

◆ Օգոստոսի 6 ին Թիֆլիսեցի Ռուբէն Տէր Սարգսեանը յայտնել է ոստիկանութեան, որ նրա աղբօր Սամսոնի բնակարանից, որ գտնվում է Նիկոլաեւսկի փողոցում, Վարդանեանի տանը, անյայտ մարդիկ գողացել են կեղծ բանալու օգնութեամբ 720 րուբլու զանազան իրեղէններ։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Բժշկականութեան դոկտոր Ստատկեվիչը, հինգ կասկածելի հիւանդութիւնների դէպքերի առիթով բակտերիօլօգիական քննութիւն կատարելով, եկել է այն եզրակացութեան, որ այդ հինգ դէպքերն էլ խոլերայի հիւանդութիւն են։

◆ Ա. Բ. Ասրիբէգեանը նուիրել է Բ. Հ. Կ. միութեանը 7500 րուբլի, որպէսզի այդ գումարով միութիւնը հինգ տարվայ ընթացքում պահի մի քանի տարրական դպրոցներ։

◆ Զինւորական ինժեներ գնդապետ Տ. Ա. Տէր Յովսէփեանցը նուիրել է կուլտուրական միութեանը 1500 րուբլի այն նպատակով, որ միութիւնը յիշեալ գումարով պէտք է բաց անի եւ պահի Շամախու գաւառի Ենգիքենդ գիւղում մի տարրական դպրոց։

◆ Օգոս. 4-ին Բարձրագոյն հրամանով կազմված խօլերային մասնաժողովի կողմից՝ խօլերայի դէմ մաքառելու նպատակով, Բագու ուղարկված Մոսկվայի համալսարանի պրիվատ-դոցենտ Ստատկեվիչը Նաւթարդիւնաբերական շրջանի առողջապահական դրութիւնը եւ խօլերայի դէմ մաքառելու պատրաստականութիւնը ստուգելու նպատակով դիտել է Բալախանիի նաւթարդիւնաբերողների խորհրդի հիւանդանոցի բոլոր հիմնարկութիւնները, նոյնպէս եւ նոյն շրջանի նաւթահանքերը, գործարաններն ու բանւորական բնակարանները։

◆ Յուլիսի 4-ին, առաւօտեան, Բիբի-Էյբաթում մահափորձ են կատարել ռուսաց նաւթարդիւնաբերական ընկերութեան նաւթահանքի կառավարչի օգնական Կուզմին Խարիտոնովի կեանքի դէմ, որի ժամանակ ծանր կերպով վիրաւորված է Խարիտոնովը, նրա թիկնապահը եւ կառապանը։ Խարիտոնովը երբ անցնում էր կառքով Բիբի Էյբաթի խճուղով, Շիբայեվի նաւթահանքերին մօտիկ նրանց դէմ դուրս եկան 4 չարագործներ եւ սկսեցին մաւուզերներից կրակել։ Դէպքի տեղը եկած ոստիկանութիւնը սկսեց որոնել չարագործներին, սակայն ապարդիւն։ Մահափորձի շարժառիթը առայժմ անյայտ է։

◆ Յուլիսի 5 ին, երեկոյեան ժամը 6-ին, Պարսկաստանից Բագու է եկել ծպտեալ կերպով շահի հօրեղբայր Զիլլի-Սուլթանը։ Արքայազնը կանգ է առել Թումանեանցի տանը։ Գիշերվայ ժամը 1-ին արքայազնը Բագուից ուղեւորվել է արտասահման։ («Б.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ

◆ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը մշակել է Ամուրեան երկաթուղու կառուցման պայմանները։ Այդ պայմանների մէջ մտցված է այն սկզբունքը, ինչ որ մատնացոյց է արված Պետական Դումայում, այսինքն՝ որ պէտք է կառուցվի ռուսական նիւթերից եւ ռուսական բանւորների ույժով։ Որովհետեւ այն բոլոր տեղերը, որտեղից անցնելու է նոր երկաթուղին, քիչ ազգաբնակութիւն ունեն, ուստի բանւորները գլխաւորապէս բերվելու են Եւրոպական Ռուսաստանից։ Չինացի բանւորներ վարձելը թոյլատրված է միայն առանձին անհրաժեշտ դէպքերում։ («Н. Вр.»)

◆ Յուլիսի 30-ի գիշերը Քիշինեվի բանտում 3 ժամ շարունակ անկարգութիւններ են տեղի ունեցել։ Բոլոր խցերում ամեն ինչ ջարդ ու փշուր է արվել։ Կոտրատել են վառարանները եւ աղիւսները պատուհաններից նետել պահակների վրա։ Մի քանի խցերում ներքնակները իրար վրա հաւաքելով նաւթով վառել են։ Անկարգութիւններին մասնակցելիս են եղել մօտ 500 բանտարկեալներ, ի թիւս որոնց 200 քրէական յանցաւորներ եւ նոյնիսկ կանայք։ Ենթադրում են, որ անկարգութիւնների նպատակն է եղել մասսայական փախուստ կազմակերպել՝ ջարդված պատուհաններից դուրս թռչելու այն ժամանակ, երբ բանտի վարչութիւնը զբաղված կը լինի հրդեհը հանգցնելով։ Իհարկէ պատուհանները արձակված մի քանի համազարկերը իսկոյն վերականգնեցին խաղաղութիւնը։ Զոհեր չը կան։ Եթէ ամբոխը կարողանար բակը դուրս գալ՝ արիւնհեղութիւնը անխուսափելի էր։ Ուժեղացրած պահակների հսկողութեամբ շտապով վերանորոգվում է բանտը։ («Р. С.»)

◆ Յուլիսի 19 ին Կուրսկից Կիեվ են տարել կալանաւոր օֆիցերներին եւ զինւորների մի խումբ, որոնք զինւորական միութեանը պատկանելու համար մեղադրվում են քրէական օրէնքի 102-րդ յօդուածով։

◆ Լուր է պտտում, որ ներկայ ուսումնական տարվայ սկզբում ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը բոլորովին արգելելու է ուսանողական համագումարները։ Ուսանողական ժողովները տեղի են ունենալու 1906 թւի մարտի 4-ի կանոնների հիման վրա։ Մինիստրութիւնը գտնում է, որ ուսանողական տնտեսական կազմակերպութիւնների մօտ օրերս կայացրած համագումարը գեղեցիկ կերպով ապացուցեց, որ ուսանողական ժողովները կարող են տեղի ունենալ ոստիկանութեան ներկայութեամբ։ Լրացուցիչ հսկողութիւնը ուսանողների վրա համալսարաններում յիշեալ մինիստրի շրջաբերական հրամանի վրա աշնանից յանձնվելու է փոխ տեսչի երկու օգնականներին, որոնց պաշտօնը սահմանված է ներկայ ուսումնական տարվայից («Р. Сл.»)

◆ Զինւորական մինիստրութեան մէջ, «Рѣчь» լրագրի ասելով, մի շարք բարեփոխութիւններ են կատարվելու. զինւորական բոլոր հաստատութիւնները մտադիր են միացնել եւ ենթարկել զինւորական մինիստրին։ Պետական պաշտպանութեան խորհրդի մէջ մտնելու են զինւորական շրջանների հրամանատարները, որոնք 2 ամսով զինւորական աշխատանքների համար հաւաքվելու են Պետերբուրգ։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 7 օգոստոսի

«Մշակի» № 169 ում պ. բժ. Ս. Շահնազարեանը հեռագրով մի նամակ խմբագրութեան է ղրկել, որի մէջ սա բողոքում է Երեւանի թեմական դպրանոցի հոգաբարձութեան կատարելապէս կուսակցական, կրքոտ եւ անարդարացի վարմունքի դէմ, որով նա արտաքսել է դպրոցից 24 տարի Երեւանի թեմ. դպրոցին ամբողջ ծառայած ուսուցիչ պ. Ս. Մաքսուեանին։ Բարենորոգչական (իսկ թայֆայական) հոգաբարձութեան ինչին են հարկաւոր պիտանի ուսուցիչներ, քանի որ նա դպրոցը դարձրել է հիւանդանոց-ապաստանարան։ Մեծ դպրոցը ապաստան չը լինէր, ապա այսպէս տեղ չէին ունենայ հիւանդ մարդիկ։ Սրանցից մէկը կոկորդի հիւանդութեան (ծերացման) պատճառով, սոյն իսկ խօսել չէ կարող, իսկ միւսը մէկ տարուց աւել, հիւանդութեան պատճառով, բացակայել է, սակայն ռոճիկ ստացել։ Էհ, մի մէկը գրել. մի թէ կարելի է [illegible], պաշտօնական ուսուցիչները աւելի արդար ու լաւ գնահատութիւն, քան արել է դպրոցի ներկայ բարենորոգչական հոգաբարձութիւնը։ Միանում եմ բժ. Ս. Շահ-Նազարեանի բողոքին։

Ա. Եղիազարեան

Կուտեմինս, 15 յուլիսի

Յայտնի է, որ Բագուի «Արամազդ» ընկերութիւնը ձեռնարկել է անցեալ տարվանից բանալ Զանգեզուր (Զանգեձոր) գաւառի հայ գիւղերում եկեղեց.-ծխական դպրոցներ։ Յիշեալ ընկերութեան նախաձեռնութեամբ բացված են դպրոցներ նաեւ Մեղրիի վիճակի մի քանի գիւղերում, ի թիւս որոնց եւ կենտրոնական դպրոց Կաքաւաբերդի չորս հայաբնակ—Վանքաւա, Կուտեմինս, Կուրիս եւ Ագարակ—գիւղերի համար։ Այս դպրոցը ընդհանուր համաձայնութեամբ բացված է Կուտեմինս գիւղում, որպէս Կաքաւաբերդի կենտրոնում։

Մենք, Կաքաւաբերդի եկ.-ծխական երկսեռ ուսումնարանի հոգաբարձուներս, յայտնում ենք հրապարակով մեր խորին շնորհակալութիւնը եւ անսահման երախտագիտութիւնը Բագուի «Արամազդ» ընկերութեան մեծարգոյ ուսումնարանական խորհրդին, որը, սկզբնապատճառ հանդիսանալով Կաքաւաբերդում ուսումնարան հիմնելու, աջակցել է մեզ դրամական եւ բարոյական օժանդակութեամբ եւ շարունակ հոգացել է դպրոցը կանոնաւոր վիճակի մէջ դնելու, առանց որոնց անհնարին էր Կաքաւաբերդի աղքատ հայ ժողովրդի համար դպրոց ունենալ։ Յիշեալ ընկերութիւնը բարեհաճել է առաջիկայ ուսումնական տարվայ ընթացքում եւս շարունակել իր հոգացողութիւնն ու նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը մեր դպրոցին, որի համար կրկին յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը։

Սրանով պատիւ ենք համարում յայտնելու մեր շնորհակալութիւնը նաեւ Կարճեան գիւղացի Սահակ Յովհաննիսեանցին, որը Վանքաւայում իր հարսանիքի հանդիսի առիթով նուիրել է դպրոցիս 5 րուբլի, այլ եւ Վանքաւա եւ Կուրիս գիւղերի բնակիչներ՝ Արշակ Սարգսեանցին եւ Գրիգոր Ղարիբեանցին, որոնք Թախտաքարաքառում յօգուտ դպրոցիս ժողովել են 31 ր. եւ 20 կ. նպաստ եւ ուղարկել են հոգաբարձութեանս։ Շատ ցանկալի է, որ մեր օտարութեան մէջ գտնվող միւս հայրենակիցներն եւս հետեւէին վերջիններիս օրինակին։

Կաքաւաբերդի եկ.-ծխական երկսեռ ուսումնարանի հոգաբարձուներ՝

Անդրէաս Ախբերջանեանց, Լազար Ղարիբեանց, Դաւիթ Միրանզուլեանց, Համբարձում Համբարձումեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

Նորընտիր տեղապահ Տ. Եղիշէ եպիսկ. Դուրեան ծնած է 1860 թ. փետր. 25-ին, Սկիւտար Էէնի-Մահալլէ թաղը։ Աշխարհական անունն է Միհրան։

Խոնարհ եւ արհեստաւոր մարդու մը զաւակն է ինքը, եւ եղբայրը մեր ամենէն տաղանդաւոր բանաստեղծներէն՝ Պետրոս Դուրեանի։ Իր նախնական ուսումն առած է Սկիւտարի Ճեմարանին մէջ, որ այն ատեն Կ. Պոլսոյ թաղային ընտրելագոյն վարժարաններէն մէկն էր։ Իր արտակարգ ուշիմութիւնը, նոյն իսկ ուսանողութեան ատենէն, ուշադրաւ ըրած էին զինքը։

Իր մասնաւոր ուսումնասիրութեան առարկան եղած էր հայերէնն եւ գրականութիւնը, որուն խորը թափանցելու համար դպրոցական դասերէ դուրս անհատապէս հետեւած է Խաչատուր Միսաքեանի խորհուրդներուն եւ հրահանգներուն եւ ինքնաշխատութեամբ նախնեաց մատենագրութեան եւ գրաբարի վրայ մեծ հմտութիւն ձեռք բերած։ Օժտուած ըլլալով բանաստեղծական աւիւնով եւ գերազանց զգայնութեամբ մը, տակաւին պատանի՝ սկսած է արտադրել հրաշալի բանաստեղծութիւններ։

Հանգուցեալ հայրապետն իր մէկ գրութեան ունկնդրելով՝ օր մը խորապէս ազդուած է եւ զայն իր մօտը կանչելով «Խորենացիի ձագուկն» անուանած է։

1876-ին Ճեմարանն աւարտելով, օգնական-ուսուցչի պաշտօն ստացաւ նոյն վարժարանին մէջ եւ 1873-ին մասնագէտ ուսուցչի հայերէն լեզուի, որուն մէջ օրէ օր աւելի կառաջադիմէր ինքնօգնութեամբ։

1879 մայիսին վարդապետ կը ձեռնադրուի եւ ա՛լ աւելի ինքնամփոփ կերպով կը նուիրուի մատենագրական, ուսուցչական եւ գրական աշխատութեանց։ Հազիւ տարի մը կը մնայ Կ. Պոլսոյ մէջ ուսուցչական պաշտօնով, զի Պարտիզակի եկեղեցւոյն քարոզիչ եւ դպրոցին տեսուչ կարգուելով 1880 Թուի սեպտեմբերին պաշտօնի կը ձեռնարկէ։ Մինչեւ այդ թուականը Պարտիզակի մէջ ոչ կանոնաւոր վարժարան գոյութիւն ունեցած էր եւ ոչ Դուրեան վրդ.-ի չափ ձեռնհասութիւն ունեցող ուսուցիչ գտնուած էր։ Հոն տասն տարի պաշտօնավարեց, գիւղին բարոյական կեանքին մէջ նշանաւոր շրջափոխութիւն մը առաջ բերելով եւ հասցնելով ամեն կերպով ներկայանալի անձեր, որոնց վրայ խորունկ կերպով դրոշմուած էր իր անձնական ազդեցութիւնն ու հմտութիւնը։

1889 ին Խորէն եպիս. Աշըգեան պատրիարք նոր ընտրուած էր, երբ իրեն վստահեցաւ փափուկ պաշտօն մը։ Այդ առթիւ Եղիշէ վրդ. Դուրեան այցելեց Ռումանիա, Անգլիա, Ֆրանսա եւ Եւրոպայի այն երկրներն, ուր հայեր կը գտնուէին։

Վերադարձին նոր բացուած էր Արմաշու Դպրեվանքը, ուր իր ներկայութիւնն անհրաժեշտ կը զգացուէր։ Հետեւաբար, 1892-ի հոկտեմբերին Արմաշ կը ղրկուի Օրմանեան արքեպսի գործակցելու համար։ Նախ իբր ուսուցիչ, ապա իբր փոխ-տեսուչ, եւ 1891 էն մինչեւ 1896 դեկտեմբեր՝ իբր վերատեսուչ Դպրեվանքին մէջ կարեւոր դեր կը կատարէ, իր հմտութեամբն եւ մանաւանդ հարազատ հայու ու անաղարտ եկեղեցականի կենցաղովը սքանչելի տիպար մը հանդիսանալով նորահաս վարդապետներուն։

Այնպէս որ 1896 նոյեմբեր 6-ին, երբ Օրմանեան եպիսկ. պատրիարք ընտրուեցաւ, վարչութիւնը հակառակ կրօն. ժողովոյ անդամ ընտրուած ըլլալուն իրմէն աւելի յարմար մէկը չը գտնելով զինքը կոչեց վերատեսչութեան եւ փոխ վանահայրութեան պաշտօնին։

1898 հոկտեմբեր 18-ին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ հանգուցեալ կաթողիկոսէն, եւ հազիւ թէ Արմաշ դարձած էր, երբ Եգիպտոսի առաջնորդ ընտրուեցաւ, սակայն չընդունեց այդ պաշտօնը, Դպրեվանքին կազմալուծմանը տեղի չտալու համար։

1904 յուլիս 20-ին Զմիւռնիոյ գաւառական ժողովը միաձայնութեամբ զինքն առաջնորդ ընտրեց եւ Եղիշէ եպիսկ. Դուրեան Արմաշու Դպրեվանքն ապահով հիմի վրայ դրած եւ յաջորդ պատրաստած ըլլալով՝ ստանձնեց այս պաշտօնն եւ կը վարէր զայն ձեռնհասութեամբ։

Իր առաջին գործն եղաւ հոն կրթական հաստատութեանց կանոնաւորումն եւ գիշերօթիկ վարժարանի բացումը, ոչ միայն Թեմականներու, այլ նաեւ Փոքր Ասիոյ հեռաւոր քաղաքներու հայոց համար։

Դուրեան սրբազան առանց թաղային համեստ վարժարանէ մը աւելի բարձր հաստատութիւն մը տեսած ըլլալու եւ շատ համեստ պայմաններու մէջ ապրած ըլլալով համալսարանականի մը հմտութիւն ունի, իբր արդիւնք անվհատ աշխատութեան եւ անաղմուկ, խաղաղ, այլ սակայն ժրաջան կեանքի մը։ Փառքը չի սիրեր եւ ցոյցէն կը խորշի։ Աւելի գրական մարդ, զգացման եւ սրտի տէր անձ, իմաստասիրող միտք, լուրջ—բառին լիակատար իմաստով—ճշմարիտ հայ, եւ բառին լիակատար եւ բացարձակ առումովը անբասիր եկեղեցական։ Ունի բազմաթիւ գրաւոր աշխատութիւններ ստուարահատոր, գրած է լրագրաց մէջ քերթուածներ եւ բանասիրական գեղեցիկ յօդուածներ եւ ունի տպագրած քանի մը դասագրքեր։ Գրեթէ բացարձակ ինքնաշխատութեամբ ուսած է լատիներէն, յունարէն, ֆրանսերէն, գերմաներէն, անգլիերէն, թուրքերէն, պարսկերէն եւ արաբերէն լեզուներ։

(«Բիւզանդիոն»)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 31 յուլիսի

Մեր ենթադրութիւնները, տարաբաղդաբար չարագուշակ ենթադրութիւնները, այսօր իրականացած ենք տեսնում, եւ իրականութիւնը աւելի այլանդակ պատկեր ունի, քան ինչ որ կարելի էր երեւակայել։ Ներկայիս ինչ որ պիտի հաղորդենք, ընթերցողը չը կարծէ, թէ սովորական լուրերից է. մեր հաղորդած լուրը շատ տարօրինակ է, նոյնիսկ անհաւատալի. բայց այսուհանդերձ զուտ ճշմարտութիւն է։

Վերջին գրածներովս յայտնել էի, որ «Новое Время»-ի թղթակիցը կարողացաւ տեսակցել Սաթթար-խանի հետ։ Այդ տեսակցութիւնից յետոյ այնպիսի լուրեր սկսեցին տարածվել ժողովրդի մէջ, որոնք բոլորովին անհաւատալի էին թւում մեզ, եւ մենք չէինք կարողանում երեւակայել անգամ, որ պրովոկատորութիւնն այսպիսի ծայրայեղ չափեր կարող է ընդունել եւ գէշ մարդիկ կարող են այնքան ընկած լինել, այնքան ստորանալ, որ պատրաստ կը լինեն բոլորովին մեռցնել իրանց կիսամեռ խիղճը եւ մարդկային արեան գնով խորհուրդներ սրբագործել…

Այդ տեսակցութեան շնորհիւ ռուսական պրեստիժը թէ ինչ բարձրութիւնից ուր իջաւ, թողնում եմ խորհրդածել գիտակից ընթերցողին միմիայն փաստերը արձանագրելով իմ կողմից։

Պ. Բերեզօվսկու տեսակցութիւնից յետոյ, թուրք ժողովրդի մէջ կասկածները դէպի ռուս կառավարութեան անկեղծութիւնը՝ աւելի մեծ ծաւալ ստացան, որովհետեւ պնդողներ կային, որ պ. Բերեզօվսկի խորհուրդ է տուել Սաթթար-խանին սահմանադրութիւնը ամրապնդելու համար ապաւինել մի քանի անգլիահպատակների եւ ռուսահպատակների, որպէս զի յիշեալ կառավարութիւնները միջամտեն ներկայ շարժումներին, սահմանադրութիւնը եւ խաղաղութիւնը ապահովելու համար…

Ինչպէս նախընթացներով էլ շեշտել եմ, թուրք ժողովուրդը յանձին Բերեզօվսկիների՝ ռուս ժողովրդին է ճանաչում եւ Բերեզօվսկիների խորհուրդը համարում է ռուս ժողովրդի խորհուրդը կամ կառավարութեան պատրաստած մեքենայութիւնները, որպէսզի հնարաւորութիւն ունենայ միջամտել պարսից ներքին գործերին։ Այս լուրը այնպիսի իրարանցում առաջ բերեց, որ նոյնիսկ ռուսաց հիւպատոսարանը ստիպված եղաւ հետաքրքրվել, ի նկատի ունենալով ռուսական շահերը, հիւպատոսարանի եւ նոյնիսկ հիւպատոսի իր պատիւը, որովհետեւ անհնար էր տգէտ ամբոխին հասկացնել, որ ռուս ժողովրդի մեծամասնութիւնը, հիւպատոսը կամ հիւպատոսութիւնը բոլորովին այլ կարծիք կարող են ունենալ եւ բոլորովին համամիտ չը լինել եւ որեւէ կապ չունենալ ինչ-որ մի Բերեզօվսկու հետ…

Մանրակրկիտ քննութիւնը պարզեց, որ պ. Բերեզօվսկին, հետը վերցնելով պ. Կաչալովին (յոյն, որը ծառայում է ճանապարհների վարչութեան մօտ) որպէս թարգման, առանց առաջօրէն ժամադրութեան իրաւունք ստանալու, գնում է Սաթթար խանի մօտ, խօսակցութեան ընթացքում յայտնում է իր ով լինելը և, ի միջի այլոց, վերոյիշեալ խորհուրդը տալիս նրան։

Այս մասին Սաթթար-խանի գրաւոր յայտնութիւնից բացի, հիւպատոսարանում ծեբունի կաչալօվն էլ իր վկայութեամբ հաստատեց։ Իսկ մենք յատկապէս տեղեկացանք պարսիկներից, որոնցից մէկը պարսիկ թերթի թղթակից է։

Մնացածը թողնում եմ խորհրդածողներին...

Իրօ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Լօնդօն, 12 օգոստոս (ն. տ.)

Երբ այս տողերը կը գրեմ, առաջիս դրուած է պոլսահայ թերթերու դէզ մը և նոյն քաղաքէն հասած նամակ մը։

Նամակին մէջ կը գրեն.—«Գիշերը քնացանք՝ սովորական արհաւիրքներով խանգարուած երազներով. երբ առաւօտուն արթնցանք՝ ազատութեան պայծառ արշալոյսը կը ճառագայթէր բովանդակ քաղաքին ու նոյն իսկ երկրին վրայ։ Փողոցները կը թնդան կեցցէներով. հազարաւորներ, նուեգոյն ժապաւէններ իրենց ջանջերուն վրայ, «Ազատութիւն, Սահմանադրութիւն և Եղբայրութիւն» վերտառութիւններով, թափօրներ կը կազմեն և ճառեր կարտասանեն»...

Թերթերուն մասին, ո՛հ, մարդ երևակայել իսկ կարող չէ։ Մոգական ցուպ մը անցած է վրայէն։ Ազատութիւն կը շնչէ իրենց իւրաքանչիւր տողը։ Օրմանեանի տապալման և դատաստանի կանչուելու լուրերը կը հաղորդեն. կը հաղորդեն նոյնպէս թէ՝ ինչպէս պալատական հին կամարիլլան խայտառ արտաքսուած է, ինչպէս սուլթանը բարեկարգիչ կոմիտէին բոլոր պայմանները կընդունի, թէ ինչպէս հայ և թիւրք, մոռցած հին ատելութիւնը, 95—96-ի նահատակներու գերեզմաններուն վրայ ոգեշունչ ճառեր կը խօսին ու մեռելոցի մաղթանքներ կը կատարեն, ու բովանդակ Պոլիսը գինովցած է ազատութեան ամբրոսիոսով։

Աստուա՛ծ իմ. ո՞վ կը հաւատար այս բոլորին. ո՞վ կերազէր այս ամէնը, այս մեծագոյն հրաշալիքը դարերու։ Եւ մտածե՜լ թէ դեռ երէկ, բռնապետական րէժիմի մը լուծին տակ այնքան տառապած ու խաբուած էինք, որ ո՛չ աչքերնուս կը հաւատանք և ո՛չ ականջնուս։

*

Այս բոլոր հրճուալից լուրերէն վերջ, սակայն, մտքիս մէջ այլ լուր մը ունիմ հաղորդելու, որ մտաբերած ատենս հոգիս կը գալարէ պժգանքով։

Անցեալ օր, ամսոյս 7-ին, մեր Լօնդօնի հայ ջօջերը, իրենց սպասարկու ունենալով ողորմելի տէրտէր մը, իրենք ևս այս ազգութեան շունչով խանդավառ, կորոշեն պատմական սոյն մեծ թուականը յաւերժացնել յիշատակելի հանդիսաւորութիւնով և եկեղեցին կը սարքեն մասնաւոր գովաբանական մաղթանք մը՝ «հայ բանտարկեալ ազատման» առթիւ։ Ասոր կը հետևի երեկոյեան ճաշկերոյթ մը՝ ի պատիւ տեղական թիւրք հիւպատոսին։

Համբերութիւնը սահման մը ունի, կ'ըսէ նշանաւոր հեղինակ մը, երբ կը դադրի առաքինութիւն մը ըլլալէ. ու մեր այստեղի սողունները այն աստիճան անցան լրբութեան ու անպատկառութեան չափը, որ պարտաւորուած կը զգանք խօսիլ հրապարակաւ, թէպէտև սա պատիւ մը ըլլայ իրենց։

Եկեղեցական արարողութեան ներկայ կըլլան ներկայ թիւրք նորեկ դեսպանը, Լօնդօնի հայ ջօջերու բարեկամ հիւպատոսը —որ դեռ երէկ տխրահռչակ «Մօտաւոր Արևելքին» բաժանորդ կըլլար այդ միևնոյն ջօջերէն մէկ-երկուքի աջակցութեամբ,— կարգ մը այլ պաշտօնեաներ և մեր լօնդօնահայ գաղութին պանծալի զարդ ջօջերը։

Արարողութեան ընթացքին, ի հարկէ, տեղի կունենայ քարոզը, կէս մը թիւրքերէն,—անշուշտ ի պատիւ թիւրքերուն,— և կէս մը հայերէն։

Մեր ջօջերուն protégé քահանան դէմը նստող թիւրք պաշտօնեաներուն և զինք շրջապատող հայ ազաներուն հաճելի երևնալու թափէն այնքան կը խելայեղուի, որ արտասանած խօսքերուն երբեքէն մին «փադիշահըմըզ բին եաշասըն», «փադիշահըմըզ չօք եաշասըն» (թագաւորնիս հազար ապրի, թագաւորնիս երկար ապրի) կըլլայ։

Եկեղեցին աւարտելով, այս պանծալի ծաղիկները, որոնք ինքզինքնին լօնդօնահայոց ներկայացուցիչը հռչակելու յաւակնութիւնը ունին, կառքերով կուղղուին թիւրքական դեսպանատունը, ուր, Համիդիէ քայլերգէն և այլ սարկահոգի ծիսակատարութիւններէ վերջ, ուրիշ «հայրենասէր» մը, փոփոխամիտ պրօֆէսօր Յակոբեան մը, որու փառքն ու պարծանքը անգլիական թերթերու մէջ ինքզինքը «հայոց հայրենասիրական միութեան» նախագահ հռչակելն է, ինչպէս որ չէ մոռցած ընել այս առթիւ ևս, անգլիացի թղթակիցներու և ազատամիտ թիւրքի մը ներկայութեան, «ողորմած և բարեգութ փադիշահ սուլթան Աբդիւլ Համիդին» երկար կենաց կը մաղթէ։

Տեղական հայութեան այս հոյակապ փունջը դեսպանատունէն ալ կառաջնորդուի ճաշարան, ուր սեղանը կը «պատուէ իր ներկայութեամբ, ի դիմաց դեսպանատան, խաժ. Րէֆֆիք-բէյ»։

Հոս ալ բաժակաճառեր կարտասանուին, —բաժակաճառեր, զորս լսելու համար մարդ համբերատար ականջներ ունենալու է, որ չփոթուի։ Աջէն ու ձախէն կը բարձրանան հայ մեծատունները և մէկը միւսը մրցիլ կը ճգնի «ամենուս սիրելի, պաշտելի և մեր բարելաւութեան համար խորհող սուլթանին» ուղղած շռայլանքներուն մէջ։ Այս բոլորը կը լսեն անգլիացի թղթակիցներ, ու չհասկցածնին ալ կը թարգմանուի, և կը կարմրին լսելով։

Ներկաներէն մէկը, ոտքի ելնելով, կառաջարկէ իր հին դօսթին, «մեր հիւպատոսին»։ Այս պարոնը խիզախութիւնը կունենայ յայտարարելու թէ՝ սուլթանը մեր ամենուս սիրուած հայրն է։ Հայր մը կը պատժէ ու կը վարձատրէ իր զաւակները, երբ որ արժան կը տեսնէ։ «Ան պատժեց մեզ մեր չարութեանց համար ժամանակին,— կը յաւելու,—և այսօր ալ կը վարձատրէ իր հաւատարիմ որդիները»։

Եւ թիւրք մը կըլլայ միայն, որ, այս բոլորին հանդէպ պժգանքով համակուած, դառնալով սմբած քահանային ու շուրջի գալարուն հայ մեծատուններուն, կըսէ. «Սուլթան Համիդին շնորհակալ ըլլալու շատ պատճառներ չունինք։ Սուլթան ազատութիւն չէր տար երբէք։ Շնորհակալ ըլլանք այն քաջարի ու յառաջադէմ հայ և թիւրք երիտասարդներուն՝ որոնք առին իրմէ այս ազատութիւնը։ Ձեր կեցցէները ուղղեցէք ձեր կռուող երիտասարդութեան ու ձեր երախտագիտութիւնը՝ ինկող նահատակներուն»...

Ահա՛ ձեզի բաղդատութիւն մը։ Հայ ջօջը այն է այսօր, ինչ որ էր երէկ. և նոյնը պիտի ըլլայ վաղը՝ ինչ ալ պատահի։

Շօվինիստ մը եղած չեմ ու ըլլալու ալ մտադիր չեմ երբէք. բայց, ասանկ դէպքեր մարդը կընդվզեն էովին։ Ալ ժամանակ է, այժմ, որ ամենուրեք մամուլի ազատութիւն կը տիրէ, հիմա ալ մեր կարգին գիրենք գիտակից հասարակութեան առջև նշաւակ դարձնենք։

Մինաս-Ցոլակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

7 օգոստոսի

ԿԻԵՎ։ Բայօնական յանձնաժողովը որոշեց միջնորդել, որ որքան կարելի է շուտով կառուցվի Բեսարաբիայի երկաթուղագիծը, նկատի առնելով նրա կարևոր նշանակութիւնը Բեսարաբիայի և Պօդօլի համար։

Բացվեց մեղուաբուծութեան և շերամապահութեան առաջին ցուցահանդէսը։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

«Մշակի» յայտարարութիւններից օգտվողներին առաջարկվում է պատուէրներ տուած ժամանակ յիշատակել լրագրի անունը և համարը։

ԵՐԿԱԹՈՒՂԻ

Գնացքների ամառնային երթևեկութիւն

(Ժամերը ճշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը՝ Թիֆլիսի ժամանակով)

	ԱՐԱԳ	ԱՐԱԳԱՑՎԱԾ	ՊՕՍՏԱՏԱՐ	ՄԱՐԴԱՏԱՐ	ԱՊՐ.-ՄԱՐԴԱՏ.
Բագուից դուրս գալը	—	4 ժ. 10 ր. ցեր.	11 ժ. 8 ր. առ.	5 ժ. 24 ր. առ.	—
Թիֆլիս հասնելը	—	8 ժ. 30 ր. առ.	5 ժ. 59 ր. առ.	10 ժ. 52 ր. երեկ.	—
Թիֆլիսից դուրս գալը	(9 ժ. 3 ր. երեկ.)	—	(7 ժ. 47 ր. առ.)	(12 ժ. 28 ր. գիշ.)	—
Բաթում հասնելը	7 ժ. 14 ր. առ.	—	8 ժ. 40 ր. երեկ.	12 ժ. 36 ր. ցեր.	—
Բաթումից դուրս գալը	11 ժ. երեկ.	—	7 ժ. 1 ր. առ.	5 ժ. 57 ր. երեկ.	—
Թիֆլիս հասնելը	9 ժ. 44 ր. առ.	—	8 ժ. 38 ր. երեկ.	7 ժ. 22 ր. առ.	—
Թիֆլիսից դուրս գալը	—	(11 ժ. 21 ր. գիշ.)	(10 ժ. 36. ր. երեկ)	(8 ժ. 58 ր. առ.)	—
Բագու հասնելը	—	1 ժ. 35 ր. ցեր.	4 ժ. 45 ր. ցեր.	12 ժ. 57 ր. գիշ.	—
Ջուլֆայից դուրս գալը	—	—	5 ժ. առ.	—	—
Երևանից դուրս գալը	—	—	—	—	9 ժ. 27 ր. երեկ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	—	—	7 ժ. 59 ր. երեկ.	—	5 ժ. 30 ր. առ.
Թիֆլիս հասնելը	—	—	5 ժ. 28 ր. առ.	—	3 ժ. 30 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	—	—	(12 ժ. 53 ր. գիշ.)	—	(11 ժ. 48 ր. առ.)
Ալէքսանդրօպօլ հասնելը	—	—	10 ժ. 21 ր. առ.	—	9 ժ. 53 ր. երեկ.
Ջուլֆա հասնելը	—	—	11 ժ. 47 ր. գիշ.	—	—
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	—	—	10 ժ. 50 ր. առ.	—	10 ժ. 15 ր. երեկ.
Կարս հասնելը	—	—	2 ժ. 9 ր. ցեր.	—	1 ժ. 49 ր. գիշ.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ և 62 առարկաներ

ՀԱՐԿԱՒՈՐ ՉԷ, այլ ԲԵՐԵԼ ՏՈՒԷՔ

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐԻ ՄՕՍԿՎԱՅԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԸ

Ուղարկում է { 1 ժամացոյց և նրա հետ 62 առարկայ } միայն **6 ր. 50 կ.**

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ բաց՝ տղամարդկանց կամ կանանց՝ անգլիական պողպատից։ Ռեմօնտուար։ Մեխանիզմը ամուր աշխատութիւն է և հաւաքված արտասահմանեան վարպետների ձեռքով։ Ժամացոյցի ճշտութիւնը ստուգված է, որի մասին երաշխաւորութիւն է տրվում։ 1) Մօդային շղթայ տղամարդի կամ կանանց պարանոցի համար. 2) Շքեղ արտասահմանեան բրէլօկ. 3) Գրպանի ամերիկական ծալվող մկրատ. 4) Ճանապարհորդական գրպանի թանաքաման. 5—6) Ծալվող գործիք մատիտով և գրչով. 7—31) 25 թերթ շքեղ պօստի թուղթ. 32—56) 25 նոյնպիսի ծրար. 57) Քսակ սաղր կաշուից բաժանմունքներով զանազան դրամների համար և 58—62) Գարնիտուր բաղկացած 3 կրծքի և 2 թեքի կոճակներից շքեղ ձևի, որոնց համար մենք բազմաթիւ շնորհակալութիւններ ստացանք։ Գարնիտուրը առանձին վաճառքով արժէ 2 ր. 50 կ.։

Ուրեմն, դուք 6 ր. 50 կօպէկով ստանում էք 63 շատ հարկաւոր առարկաներ։ Բոլոր այդ իրերը փակ ժամացոյցի հետ 7 ր. 50 կ., իսկ արծաթէ խուլ ժամացոյցի հետ ուղարկվում են 13 ր. 50 կօպէկով։

Արկղի մէջ դարսելը՝ ձրիաբար։ Կատարումը՝ ճշտութեամբ։ Ուղարկվում է վերադիր վճարով։

Առաքման համար պէտք է աւելացնել Եւրոպ. Ռուսաստ.—50 կ., իսկ Ասիական—75 կօպ.։

Լիակատար երաշխաւորութիւն ապրանքի լաւ որակութեան համար

Պատուէրներն ուղղել՝ Московскому Центральному Складу Часовъ. Москва, д. Виноградова, № 126.

Յ. Գ. Կանխավճար ուղարկողներին, դրամով կամ մարկաներով, ուղարկվում է ձրի իբրև պրէմիա 10 բաց նամակներ, շքեղ կերպով պատրաստված իւղային ներկերով։

Խնդրում ենք չը խառնել Վարշավայի ֆիրմաների հետ։

(ու.

20—3

Բ Ժ Ի Շ Կ

Ա. Միխիթարեանց

Անցեալ տարիների նման ընդունում է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլովօդսկում, հիւրանոց «Ռօսսիա»։

(ա. օ.) 100—97

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9 ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.

(Ե. Հ. Շ.) 100—99

ՄԻ ՈՒՍԱՆՈՂ

աւարտած Թիֆլիսի III գիմնազիան և երաժշտական դպրոցը, և

Մ Ի Վ Ա Ր Ժ Ո Ւ Հ Ի

գիմնազիայի վկայականով, որոնում են Թիֆլիսի կամ գաւառների ուսումնարաններում ԴԱՍԵՐ ռուսաց լեզուի, թւաբանութեան և երգեցողութեան։ Հասցէ՝ Тифлисъ, Авлабаръ, Араратская № 14,

4—3

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

ՅՈՎՍԷՓ Մելիք-Ջհանեանցի

Церковная ул. д. № 11. (близъ памятника Воронцова)

Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են՝ ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։ Այդտեղ կազմակերպված են և խմբական պարապմունքներ միջնակարգ դպրոցների բարձր դասարաններ մտնել ցանկացողների համար։ Առարկաներ աւանդելու համար հրաւիրված են մասնագէտ ուսուցիչներ։ Ի միջի այլոց աւանդվում է և իտալերէն։

(օ. մ.) 20—13

ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ



Տղամարդկանց գրպանի ժամացոյց, բաց (չոսկեջրած), ամերիկական իսկական «ՍՕԼՕ» ոսկուց, գեղեցիկ քանդակով։ 56 պ. ոսկուց մասնագէտն էլ չի ջոկի։ Այս ժամացոյցի շինուածքը ամենալաւագոյն «anker»-ից (և ոչ ցիլինդր), լարվում է 36 ժամը մի անգամ, քանում է շատ ճիշտ։ Երաշխաւորութիւն 6 տարով։ Գինը 12 ռուբլու տեղ միայն 3 r. 25 կ., երկուսը՝ 6 ր.։ Նոյն տեսակի կանանց—հատը 4 ր.։ Ձրիաբար տրվում է՝ 1) շղթայ նոյն նիւթից, 2) բրելօկ-բինօկլ գեղեցկագոյն հեռաքրքրաշարժ տեսարաններով, 3) զամշեայ քսակ, որ ժամացոյցը փչանալուց ազատ է պահում։

Հասցէն՝ Генеральное представительство часовъ «СОЛО» Т-во «АПОЛЛО». Варшава, М. 1-е почтов. отдѣленіе.

Ծրարելու և ուղարկելու համար մի կամ չորս ժամացոյցից առնվում է 50 կօպէկ։ Սիբիր՝ 75 կ.։ Սիբիր առանց գրաւականի չէ ուղարկվում։ Ուղարկում ենք վերադիր վճարով։

Թղթակցութիւնը ռուսերէն և գերմաներէն լեզուներով։

(օգ. 8, 18) 3—2

Փ Ո Ղ 100—200 ռուբլի **Փ Ո Ղ**

ամսական կարող է ունենալ իւրաքանչիւրը։ Պաշտօնը, զբաղմունքը, նոյնպէս և որևէ տեղ բնակչութիւն ունենալը արգելք չեն լինում։ Ոչ մի դրամագլուխ ունենալ հարկաւոր չէ։ Մանրամասնութիւնները հաղորդվում են անյապաղ և առանց վարձատրութեան։

Հասցէագրել՝ г. Москва, Почт. ящ. 754.

(ու.) 20—3



1865 г. 1870 г. 1882 г. 1896 г.

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

1860. Т.Р.А.Р.М. С.ПЕТЕРБУРГЪ.

Իսկականները միայն այս դրոշմով

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՌԵԶԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ

ԸՆԿ. Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

ԼՐԻՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ

լաւ յատկութեան համար

ՄԵԾԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՔԸ կատարում է

„ԼԷՕՊՕԼԴ ՆԷՅՇԵԼԼԵՐ“

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
ՌԻԳԱՅՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ

ԽԱՐԿՕՎՈՒՄ
ՕԴԵՍՍԱՅՈՒՄ
ՌՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ
ԿԱԶԱՆՈՒՄ

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՏԱՇԿԵՆՏՈՒՄ

Նիժեգօրօդեան և Իրբիտեան տօնավաճառներում

(հ. կ.) 50—1

Типографія „Экономія“ Ав. Мугдусіакопова съ С-ми Большая Бакинская ул. № 3.